Նշված դրամագլխի գումարները Հայաստանի Հանրապետության կենտրոնական գանձապետարանի լիազոր մարմնի արտաբյուջետային հաշվում պահվում են ըստ ընդերքօգտագործողների՝ նրանցից յուրաքանչյուրի համար սահմանված կարգով բացված ենթահաշիվներում:

Շրջական միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատուցումների չափերը, հաշվարկման կարգը սահմանվում են ՀՀ կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի թիվ 1079-Ն որոշմամբ:

Տեղական ինքնակառավարման մարմինների եկամուտների քարտեզ

Համայնքների բյուջեների վերաբերյալ պաշտոնական տեղեկատվությունը հասանելի է Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայք-էջում՝ վերը նշված նույն հղումով՝ <http://armstat.am/file/doc/99499473.pdf>: Մասնավորապես, ներկայացված է տեղեկատվություն հետևյալ եկամուտների վերաբերյալ՝ 1. Գույքային հարկեր անշարժ գույքից, 2. գույքային հարկեր այլ գույքից, 3. Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ, 4. Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ, 5. այլ հարկային եկամուտներ: Ինչպես արդեն նշվել է, տեղեկությունները հրապարակվում են հաջորդ տարի աշնանը:

Ըստ մարզերի և ըստ համայնքների համայնքային բյուջեների եկամուտների վերաբերյալ տեղեկատվություն հասանելի է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության պաշտոնական կայք-էջում: Մասնավորապես, մարզային և համանքային բյուջեներին առնչվող տեղեկությունները ներկայացված են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության պաշտոնական կայք-էջի բյուջետային գործընթաց-ՀՀ համայնքների բյուջետային եկամուտներ հատվածում հետևյալ հղումով՝ <http://www.mtad.am/hy/budgetary-incomes/>: ՀՀ համայնքային բյուջետային եկամուտների վերաբերյալ վերջին տեղեկատվությունը 01.07.2017 դրությամբ է և ներկայացված է ըստ համայնքների հավաքագրված 1. գույքահարկը, 2. հողի հարկը, 3. տեղական տուրքերը, 4. համայնքի բյուջե վճարվող պետական տուրքերը և 5. այլ եկամուտները:

Ենթակառուցվածքների համար մատակարարումները և ապրանքափոխանակության կարգավորումները, հնարավոր փաստացի օրինակներ

Ընդերքօգտագործման պայմանագրերում ներառվող պարտադիր պայմանները և պահանջները կարգավորվում են ՀՀ ընդերքի մասին օրենսգրքով:

Եկամուտների վերաբերյալ տվյալների ապակենտրոնացման մակարդակ (ըստ մարզերի, ըստ քննչությունների, ըստ լիզենզիաների)

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի համաձայն, բյուջետային եկամուտներն են օրենսդրությանը համապատասխան պետական և համայնքների բյուջեներ մուտքագրվող՝ համապատասխանաբար պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տնօրինվող դրամական միջոցները:

Նույն օրենքի համաձայն, ՀՀ բյուջետային համակարգը հիմնված է երկմակարդակ՝ պետական և համայնքային բյուջեների վրա: Պետական և համայնքների բյուջեները հիմնվում են ֆինանսական, դրամավարկային և հարկային միասնական պետական քաղաքականության վրա: Մասնավորապես, պետական բյուջեի եկամուտների աղբյուրներն են՝

- ա) հարկային եկամուտները.
- բ) պետական տուրքերը.
- դ) պաշտոնական դրամաշնորհները.
- ե) այլ եկամուտներ:

Հարկային եկամուտներ են՝

- ա) ավելացված արժեքի հարկը.
- բ) ակցիզային հարկը.
- գ) շահութահարկը.
- դ) եկամտային հարկը.
- ե) գույքահարկը՝ համայնքի վարչական տարածքից դուրս գտնվող գույքի համար.
- զ) հողի հարկը՝ համայնքի վարչական տարածքից դուրս գտնվող հողի համար.
- է) հաստատագրված վճարները.
- ը) մաքսատուրքերը.
- թ) բնապահպանական և բնօգտագործման վճարներ.
- թ²) ճանապարհային վճարը.
- թ³) հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարը.
- թ⁴) ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման (գործողության ժամկետի երկարաձգման) պարտադիր վճարը և օգտագործման պարտադիր վճարը.
- թ⁷) արտոնագրային վճարները.
- թ⁸) շրջանառության հարկը.
- թ⁹) նպատակային սոցիալական վճարները.
- թ¹⁰) դրոշմանիշային վճարները.

ժ) հարկային օրենսդրությունը խախտելու համար գանձվող տուգանքները և տույժերը՝ բացառությամբ օրենքով համայնքների բյուջեներ մուտքագրվող հարկերի գծով չվճարման համար գանձվող տուգանքների և տույժերի.

ժա) օրենքով պետական բյուջեին ամրագրված այլ հարկային եկամուտներ:

1. Համայնքների բյուջեներին օրենքով և իրավական այլ ակտերով ամրագրվող եկամուտները, այդ թվում՝

- ա) հարկային եկամուտները.
- բ) տուրքերը.

գ) պաշտոնական դրամաշնորհները.

դ) այլ եկամուտներ:

1.1. Հարկային եկամուտներն են՝

ա) տեղական հարկեր՝

- հողի հարկ՝ համայնքի վարչական տարածքում գտնվող հողի համար,
- գույքահարկ՝ համայնքի վարչական տարածքում գտնվող գույքի համար,
- հյուրանոցային հարկ,
- օրենքով համայնքների բյուջեներին ամրագրված այլ տեղական հարկեր.

գ) օրենքով պետական բյուջեին ամրագրվող այլ հարկատեսակներից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումները (յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին օրենքով սահմանվող չափերով).

դ) տեղական հարկերի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժերը և տուգանքները:

1.2. Տուրքերն են՝

ա) քաղաքացիական կացության ակտեր գրանցելու, դրանց մասին քաղաքացիներին կրկնակի վկայականներ, քաղաքացիական կացության ակտերում կատարված գրառումներում փոփոխություններ, լրացումներ, ուղղումներ կատարելու և վերականգնման կապակցությամբ վկայականներ տալու համար գանձվող պետական տուրքը.

բ) նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայություններ կատարելու, նոտարական կարգով վավերացված փաստաթղթերի կրկնօրինակներ տալու, նշված մարմինների կողմից գործարքների նախագծեր և դիմումներ կազմելու, փաստաթղթերի պատճեններ հանելու և դրանցից քաղվածքներ տալու համար գանձվող պետական տուրքը.

գ) տեղական տուրքերը:

1.4. Այլ եկամուտներն են՝

ա) համայնքի սեփականություն համարվող հողերի, ինչպես նաև համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության կամ կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարները.

բ) համայնքային հիմնարկների հաշվեկշիռներում հաշվառվող գույքի վարձակալությունից եկամուտները.

գ) վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից վարչական պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտները.

դ) համայնքի սեփականություն համարվող կազմակերպությունների տրամադրության տակ մնացած շահույթից համայնքի ավագանու որոշումներով կատարվող մասհանումները.

ե) տեղական վճարները.

զ) համայնքային հիմնարկների կողմից առանց տուրքի գանձման մատուցվող ծառայությունների դիմաց ստացվող (գանձվող) վճարները.

է) պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման համար տրվող միջոցները.

ը) օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրվող այլ եկամուտները:

Ստացվում է, որ թե պետական բյուջե, թե համայնքային բյուջեներ հավաքագրվող եկամուտների՝ տվյալ դեպքում հարկային եկամուտների, շրջանակները հստակ սահմանված

են «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով: Ինչ վերաբերում է օրենքով պետական բյուջեին ամրագրվող այլ հարկատեսակներից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումների կատարմանը (յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին օրենքով սահմանվող չափերով), ապա վերջին տարիներին պետական բյուջեի մասին օրենքներով նմանատիպ մասհանումներ չեն իրականացվել: Հստակ են նաև թե պետական բյուջեի, թե համայնքային բյուջեների հարկային եկամուտների նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները: Պետական բյուջեի եկամուտների հավաքագրման նկատմամբ վերահսկողություն է իրականացնում հարկային մարմինը, իսկ համայնքի բյուջեի հարկային եկամուտների հավաքագրման դեպքում՝ համապատասխան համայնքը:

Ըստ մարզերի, ըստ ոլորտների եկամուտների վերաբերյալ տվյալների ապակենտրոնացման համակարգ չի գործում, քանի որ «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի համաձայն, ՀՀ բյուջետային համակարգի սկզբունքներից է բյուջետային ելքերի ամբողջական (համախառն) ծածկվածության սկզբունքը, ինչը նշանակում է, որ բյուջեի բոլոր ելքերը պետք է ծածկվեն բյուջեի մուտքերով: Մուտքերը չեն կարող կապվածություն ունենալ որոշակի ելքերի հետ, բացառությամբ նպատակային բյուջետային մուտքերի ստացման դեպքերի, կամ օրենսդրությամբ նպատակային բյուջետային ֆոնդերի ստեղծման դեպքում՝ դրանց մուտքերի: Նշված սկզբունքի կիրառությունից կարելի է ենթադրել, որ ՀՀ պետական բյուջե հավաքագրվող եկամուտները՝ տվյալ դեպքում հարկերը, ըստ կազմակերպություններից կամ ըստ առանձին ոլորտների չեն տարանջատվում: Նույն սկզբունքը, գործում է նաև համայնքային բյուջե հավաքագրվող եկամուտների նկատմամբ:

Միաժամանակ, ՀՀ օրենսդրությամբ հանքարդյունաբերության ոլորտից նպատակային բյուջետային մուտքեր ևս առանձնացված չեն, հետևաբար հանքարդյունաբերության ոլորտից հավաքագրված եկամուտները առանձին չեն հաշվառվում:

Ըստ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության և օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքօգտագործման իրավունքների մասին տեղեկատվությունը հասանելի է ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության պաշտոնական կայք-էջում հետևյալ հղումով՝ <http://www.minenergy.am/page/422>:

Հարկային եկամուտների վերաբերյալ տվյալների հասանելիության հնարավոր խոչընդոտները

«Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի համաձայն, հարկային մարմնի գործառնություններից է Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեների՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների հաշվառումը, որն իրականացվում է հարկ վճարողների կողմից ներկայացված հաշվարկ, հաշվետվություններում արտացոլված տվյալների, ինչպես նաև հարկային մարմնի կողմից տվյալ կազմակերպությունում իրականացված ստուգման արդյունքում առաջադրված լրացուցիչ պարտավորությունների հիման վրա: Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտներ են համարվում Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեներ վճարվող հարկերի, տուրքերի և օրենքով սահմանված պարտադիր այլ վճարների, դրանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով հաշվարկվող տույժերի և տուգանքների ամբողջություն, որոնց հաշվառումը, հաշվառման և (կամ) վճարման նկատմամբ հսկողությունը, մուտքերի ապահովման վերահսկողությունը: Նշված բոլոր տվյալները արտացոլված են ՀՀ

կառավարությանն առընթեր պետական եկամուտների կողմից վարվող **«Հարկատու 3»** տեղեկատվական շտեմարանում: **«Հարկատու 3»** տեղեկատվական շտեմարանը խորը վերլուծությամբ օժտված ճկուն ծրագիր՝ համալրված ընդգրկուն տեղեկատվությամբ: Այն թույլ է տալիս յուրաքանչյուր հարկատուի վերաբերյալ ունենալ ամբողջական տեղեկատվություն, մասնավորապես շտեմարանում արտացոլված են տվյալ հարկատուի բոլոր գործարքները, տեսանելի է փոխհարաբերությունները այլ տնտեսվարող սուբյեկտների հետ: Հետևաբար, հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա է հարկ վճարողի վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն, որն արտացոլված է վերջինիս կողմից հարկային մարմին ներկայացվող հաշվարկ, հաշվետվություններում կամ առաջադրվել է ստուգման արդյունքում:

Մինևույն ժամանակ, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի համաձայն, **հարկային գաղտնիքը՝** հարկ վճարողի, հարկ վճարողի գործունեության վերաբերյալ հարկային մարմնի կամ հարկային ծառայողի ստացած ցանկացած տեղեկությունն է, բացառությամբ՝

- հարկ վճարողի կողմից կամ նրա համաձայնությամբ հրապարակված տեղեկությունների,

- հարկ վճարողի հաշվառման համարի վերաբերյալ տեղեկության,

- հարկ վճարողի կանոնադրության մեջ ներառվող տեղեկությունների,

- հարկային օրենսդրության և հարկային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերի պահանջների խախտման և կիրառված պատասխանատվության միջոցների վերաբերյալ տեղեկությունների,

- հարկ վճարողի (հարկ վճարողի գործունեության) վերաբերյալ միջազգային կամ միջգերատեսչական պայմանագրերի (համաձայնագրերի) հիման վրա այլ պետությունների հարկային (մաքսային) մարմիններին ներկայացվող տեղեկությունների: Հարկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների օգտագործման, տրամադրման և հրապարակման դեպքերը սահմանվում են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությամբ:

2018 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտնող Հարկային օրենսգրքի 308 հոդվածով սահմանվում են հարկ վճարողների վերաբերյալ հրապարակման ենթակա ցանկերը: Մասնավորապես, հարկային մարմինը հարկ վճարողների իրազեկման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ձևով և կարգով հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակում է՝

1) մինչև հարկային տարվան հաջորդող հարկային տարվա հուլիսի 1-ը ներառյալ՝

ա. հարկային տարվա արդյունքներով հարկային վնասներ հայտարարագրած և ապառքներ կուտակած հարկ վճարողների ցանկերը,

բ. աշխատողի աշխատանքի ընդունումն օրենսդրությամբ սահմանված կարգով չգրանցած հարկ վճարողների ցանկերը,

գ. հարկային տարվա արդյունքներով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 50 միլիոն դրամ և ավելի շահութահարկ վճարած հարկ վճարողների ցանկերը,

դ. հարկային տարվա արդյունքներով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 10 միլիոն դրամ և ավելի եկամտային հարկ վճարած հարկային գործակալների ցանկերը,

ե. Օրենսգրքի 384-րդ հոդվածի համաձայն՝ գործունեությունը կասեցված կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ցանկը,

զ. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ տեղեկություններ.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը ներառյալ՝ առաջին 1000 խոշոր հարկ վճարողների ցանկերը և հարկային տարվա սկզբից նրանց վճարած հարկերի մեծությունները՝ հաշվարկված աճողական կարգով:

Մնացած բոլոր դեպքում, հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա տեղեկատվությունը համարվում է հարկային գաղտնիք և նախատեսված է ներքին օգտագործման համար:

Հավաքագրման համար անհրաժեշտ տվյալների արդիականությունը, որակը և վստահելիությունը

Հարկային մարմնի տեղեկատվական տվյալների շտեմարանի կառավարումն իրականացվում է ISO/IEC-27001:2013 ստանդարտի համաձայն, որին համապատասխանությունը հավաստվել է ոլորտում միջազգային ճանաչում ունեցող BUREAU VERITAS կազմակերպության կողմից:

Կառավարության և ընկերությունների տվյալների ներկայացման (հավաքագրման) եղանակը

Ինչպես նշվել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ ամբողջական տեղեկատվական բազան վարվում է հարկային մարմնի կողմից, որը ձևավորվում է հարկ վճարողների կողմից ներկայացված հաշվարկ, հաշվետուություններում արտացոլված տվյալներից կամ ստուգմամբ առաջադրված հարկային պարտավորություններից:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15.1 հոդվածի համաձայն՝ հարկային օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունների, այլ փաստաթղթերի և տեղեկությունների ներկայացումը պարտադիր է էլեկտրոնային եղանակով հետևյալ ժամանակացույցին համապատասխան՝

1) 2010 թվականի հունվարի 1-ից՝

ա) բանկերի, վարկային կազմակերպությունների, վճարահաշվարկային կազմակերպությունների, արժեթղթերի շուկայում հաշվետու թողարկողների, ներդրումային ընկերությունների, կարգավորող շուկայի օպերատորի, կենտրոնական դեպոզիտարիայի, ապահովագրական ընկերությունների, վերաապահովագրական ընկերությունների համար,

բ) «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն խոշոր համարվող կազմակերպությունների համար,

գ) նախորդ հաշվետու տարվա արդյունքներով 100 միլիոն դրամ և ավելի իրացման շրջանառություն (համախառն եկամուտ) ունեցող պետական կառավարչական հիմնարկների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների համար,

դ) նախորդ հաշվետու տարվա արդյունքներով 100 միլիոն դրամ և ավելի իրացման շրջանառություն (համախառն եկամուտ) ունեցող՝ 50 տոկոս և ավելի պետական բաժնեմաս ունեցող ընկերությունների համար.

2) 2010 թվականի հուլիսի 1-ից նախորդ հաշվետու տարվա արդյունքներով 100 միլիոն դրամ և ավելի իրացման շրջանառություն (համախառն եկամուտ) ունեցող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար:

3) 2012 թվականի հունվարի 1-ից նախորդ հաշվետու տարվա արդյունքներով 58.35 միլիոն դրամից ավելի ավելացված արժեքի հարկով հարկվող շրջանառություն ունեցող

(ավելացված արժեքի հարկի շեմը գերազանցած) կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար:

Էլեկտրոնային եղանակով և հարկային օրենսդրությամբ սահմանված ժամկետներում հաշվարկը, հայտարարագիրը կամ օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված այլ փաստաթուղթ հարկային մարմին չներկայացնելն առաջացնում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով և նշված օրենքով սահմանված պատասխանատվություն:

2016 թվականի հունվարի 1-ից սկսած՝ հաշվարկային փաստաթղթերը (բացառությամբ հսկիչ-դրամարկղային մեքենաների կտրոնների և ապրանքների արտահանման դեպքում դուրս գրվող հաշվարկային փաստաթղթերի) դուրս են գրվում բացառապես էլեկտրոնային եղանակով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

2018 թվականի հունվարի 1-ից Հարկային օրենսգրքի 53-րդ հոդվածի համաձայն, հարկային հաշվարկները հարկային մարմին են ներկայացվում էլեկտրոնային եղանակով, բացառությամբ

1) այն հարկային հաշվարկների, որոնցում պարունակվում է գաղտնիք համարվող և (կամ) սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն: Սույն կետում նշված հարկային հաշվարկները կարող են հարկային մարմին ներկայացվել նաև թղթային եղանակով.

2) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դեպքերի, երբ հարկային հաշվարկները կարող են հարկային մարմին ներկայացվել նաև թղթային եղանակով:

Օրենսգրքի 310-րդ հոդվածի համաձայն, հարկ վճարողի կամ հարկային գործակալի կողմից Օրենսգրքով սահմանված հարկային հաշվարկների՝ էլեկտրոնային եղանակով ներկայացումն իրականացվում է հարկային մարմնի հետ կնքված՝ էլեկտրոնային եղանակով հարկային հաշվարկների ներկայացման մասին պայմանագրի (այսուհետ՝ ԷՆՊ) հիման վրա և էլեկտրոնային թվային ստորագրության, էլեկտրոնային ծածկագրի ու գաղտնաբառի կիրառության միջոցով:

Հարկային օրենսգրքի 313-րդ հոդվածի համաձայն, հարկ վճարողը հնարավորություն ունի իրական ժամանակում առցանց եղանակով դիտելու իր անձնական հաշվի քարտը (այդ թվում՝ հարկային պարտավորությունները և դրանց մարումները): Հարկ վճարողը հնարավորություն ունի նաև արտատպելու իր անձնական հաշվի քաղվածքը, որտեղ նշված տեղեկատվությունը համարվում է հարկային մարմնի կողմից հաստատված տեղեկատվություն և, ըստ անհրաժեշտության, ընդունվում է այլ կազմակերպությունների և ֆիզիկական անձանց կողմից:

Ներգրավված պետական գերատեսչություններ

1. Բնապահպանության նախարարություն,
2. Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն,
3. Ֆինանսների նախարարություն,
4. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Ներգրավված պետական գերատեսչությունների նշված ցանկը ներկայացվել է բացառապես հանքարդյունաբերության ոլորտի կազմակերպությունների կողմից իրավունքներ, լիզենզիաներ ստանալու, դրանց վերահսկման և ոլորտը կարգավորող

հարկային օրենսդրության և հարկային հսկողություն իրականացնող գերատեսչությունների գործառույթների տեսանկյունից:

3. Եկամուտների բաշխում

2018 թվականի հունվարի 1-ից հետո բնապահպանական և բնօգտագործման վճարները վճարվելու է պետական բյուջե: Մասնավորապես, 2018 թվականից բնապահպանական վճարները դասակարգվել են որպես բնապահպանական հարկ, որը բնապահպանական միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման նպատակով սույն բաժնին համապատասխան պետական բյուջե վճարվող հարկ է:

Հարկային օրենսգրքի 197-րդ հոդվածի համաձայն, բնօգտագործման վճարը պետական սեփականություն համարվող բնական պաշարների արդյունավետ և համալիր օգտագործման, ինչպես նաև բնական պաշարների օգտագործումը փոխհատուցելու նպատակով այդ պաշարների օգտագործման համար սույն բաժնին համապատասխան Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվող վճար է: Միաժամանակ, բնօգտագործման վճարի տեսակ է ռոյալթին, որը մետաղական օգտակար հանածոների օգտագործումը փոխհատուցելու նպատակով, ինչպես նաև մետաղական օգտակար հանածոների և դրանց վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի օտարումից ստացվող շահութաբերության համար, սույն բաժնին համապատասխան, Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվող վճար է:

Ստացվում է, որ 2018 թվականի հունվարի 1-ից համայնքային բյուջեներ այլևս բնապահպանական և բնօգտագործման վճարներ չեն հավաքագրվելու: Հետևաբար, 2018 թվականի հունվարի 1-ից նշված՝ բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների հաշվարկման և վճարման նկատմամբ հսկողություն իրականացվելու է հարկային մարմնի կողմից և ամբողջական տեղեկատվությունը հասանելի կլինի ՀՀ ԿԱ պետական եկամուտների տվյալների բազայում:

Ինչ վերաբերում է պետական բյուջեից հօգուտ համայնքային բյուջեի ըստ որևէ հարկատեսակի մասհանումների կատարմանը, ապա վերջինս կարող է իրականացվել «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

4. Սոցիալական ծախսեր

ՀՀ օրենսդրությամբ հանքարդյունաբերական ընկերությունների կողմից նպատակային սոցիալական վճարներ վճարելու պարտավորություններ ամրագրված չեն: Չեն բացառվում առանձին հանքարդյունաբերական ընկերությունների հետ կնքված պայմանագրերով նախատեսված լինեն որոշակի սոցիալական ծախսեր իրականացնելու դրույթներ, սակայն դրանց վերաբերյալ տեղեկություններ ստանալու աղբյուրները բացակայում են:

Թերևս որպես սոցիալական ուղղվածություն ունեցող միջոցառում կարելի է նշել շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի առկայությունը:

Ամփոփում

Ամբողջ տնտեսության մակարդակով վճարված հարկերի վերաբերյալ կարելի է պատկերացում կազմել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տեղեկատվական բազաներից: Սակայն նշված տեղեկությունները հրապարակման առումով բավականին մեջ

Ժամանակային խզում ունեն: Հաջորդ տեղեկատվական աղբյուրը ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի տեղեկատվական շտեմարանն է, որտեղ հավաքագրվող տվյալները արժանահավատ են և պահպանվում են ժամանակակից միջազգային ստանդարտներին համապատասխան: Միաժամանակ, ըստ կազմակերպությունների վճարված հարկերի վերաբերյալ տեղեկատվության միակ հրապարակային աղբյուրը պետական եկամուտների կոդմից հրապարակվող խոշոր հարկ վճարողների և նրանց կոդմից վճարված հարկերի վերաբերյալ ցանկերն են:

Կազմակերպության կոդմից վճարվող հարկերի վերաբերյալ ԱՃԹՆ ստանդարտին համապատասխան հարկային տեղեկությունների ստացման համար կարելի է դիտարկել երկու եղանակ.

ա) հանքարդյունաբերության ոլորտի կազմակերպությունների կոդմից պահանջվող տեղեկատվության հրապարակում,

բ) հանքարդյունաբերության ոլորտի կազմակերպությունների կոդմից վճարված հարկերի վերաբերյալ տեղեկությունների հրապարակում հարկային մարմնի կոդմից՝ համաձայն Հարկային օրենսգրքի 308-րդ հոդվածի:

Այնուամենայնիվ, գործող օրենսդրության և տեխնիկական հագեցվածության մակարդակի առումով առավել նպատակահարմար կլինի դիտարկել 2-րդ եղանակը:

Հավելված 9. Ընկերությունների ցանկ, որոնք ստացել են ընդերքօգտագործման թույլտվություն երկրաբանական ուսումնասիրություններ կատարելու նպատակով

ՑԱՆԿ

2015, 2016 և 2017թթ ընթացքում երկրաբանական ուսումնասիրության, ինչպես նաև մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության ընդերքօգտագործման իրավունքներ ունեցող ընկերությունների

N	Իրավաբանական անձի անվանումը	Գործունեության իրականացման վայրը	Օգտակար հանածոյի անվանումը	Թույլտվության համարը /ԵՀԹ-.../, /ԵՀԹՎ-.../	Թույլտվության տրամադրման ամսաթիվը	Թույլտվության գործողության ժամկետի ավարտը	Ծանոթություն
1	2	3	4	5	6	7	8
1	<Ջեմ Փրոդաքշն> ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզի Թթուջրի երկաթ	երկաթ	ԵՀԹ-29/002	26.04.12թ	31.03.15թ	գործող
2	<Ֆորչն Ռիզորսիս> ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզի Հրազդանի երկաթ	երկաթ	ԵՀԹ-29/008	19.04.12թ	31.03.15թ	գործող
3	<Սփայս Սթիլ > ՓԲԸ	ՀՀ Կոտայքի մարզի Աբովյանի երկաթ	երկաթ	ԵՀԹ-29/009	20.04.12թ	31.03.15թ	գործող
4	<Սթորթրանս> ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզի Խաչաքար-Փարավանի բազմամետաղ	բազմամետաղ	ԵՀԹ 29/010	25.04.12թ	30.06.2017թ	գործող
5	<Ռեյր էրթս> ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզի Թեժսարի ոսկի	ոսկի	ԵՀԹ-29/011	16.05.12թ	31.03.15թ	գործող

6	<Մեթըլ Փրինս Էլ Թի Դի Հայաստանյան մասնաճյուղ> կորպորացիա ՀՄՃ	ՀՀ Լոռու մարզի Ալվարդ և Կաճաճկուտ պղնձի հանքերևակումներ	պղինձ	ԵՀԹ-29/023	28.12.12թ	30.11.15թ	գործող
7	<Գոլդարտ> ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզի Մարմարիկի ոսկի-բազմամետաղ	ոսկի-բազմամետաղ	ԵՀԹ-29/027	21.05.12թ	31.03.15թ	գործող
8	<Արատտա լեռնային> ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզի Շատչրեք ոսկու	ոսկի	ԵՀԹ-29/028	28.12.12թ	30.06.15թ	գործող
9	<Արատտա Մայնինգ> ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզի Կողասար (ոսկի)	ոսկի	ԵՀԹՎ-29/030	02.09.10թ	31.08.15թ	գործող
10	<Արատտա Մայնինգ> ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզի Զիլ արեգունի (ոսկի)	ոսկի	ԵՀԹՎ-29/031	02.09.10թ	31.08.15թ	գործող
11	<Արատտա Մայնինգ> ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզի Մաքենիս (ոսկի)	ոսկի	ԵՀԹՎ-29/032	02.09.10թ	31.08.15թ	գործող
12	<Արատտա Մայնինգ> ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզի Վերին Շորժա (ոսկի)	ոսկի	ԵՀԹՎ-29/033	02.09.10թ	31.08.15թ	գործող
13	<ԱՏ-ՄԵՏԱԼՍ> ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզի Քարասարի, Պրիխրեպտովոյե հանքերևակումում	ոսկի	ԵՀԹՎ 29/040	08.08.07թ.	15,06,2016թ	գործող
14	<Վենտմայն> ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզի Իրիմիսի ոսկի-բազմամետաղային հանքերևակում	ոսկի-բազմամետաղ	ԵՀԹՎ 29/041	08.08.07թ	15.06.16թ	գործող
15	«ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ	ՀՀ Վայոց Ձորի մարզի Սարավան գյուղի մերձակա տարածք (ազնիվ մետաղներ)	ազնիվ մետաղներ	ԵՀԹՎ- 29/043	08.08.07թ	22.05.16թ	գործող

16	<Մուլտի Գրուպ Կոնցեռն> ՍՊԸ	ՀՀ Լոռու մարզի Հազվի-Մդարթ-Մեծծոր հանքային դաշտի Մդարթ-Հովնանաձոր, Մեծծոր և Հազվի սուլֆիդային երևակումներ	ոսկի	ԵՀԹՎ-29/057	03.08.07թ	28.12.17թ	գործող
17	<Սփայս Սթիլ > ՓԲԸ	ՀՀ Կոտայքի մարզի Աբովյանին երկաթի հանքավայր	երկաթ	ԵՀԹՎ-29/059	29.10.10թ	20.03.15թ	գործող
18	<Ղարագույլաններ> ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզի Վերին Վարդանիձորի ոսկու հանքերևակում	ոսկի	ԵՀԹՎ-29/063	30.08.10թ	07.08.16թ	գործող
19	«Գեոռեյր» ՓԲԸ	ՀՀ Սյունիքի մարզի Մուծքի (Բարձրավան) հանքերևակում (բազմամետաղներ)	բազմամետաղ	ԵՀԹՎ-29/066	26.07.10թ	30.06.19թ.	գործող
20	<Դանդի Փրիշս Մետալս Կապան> ՓԲԸ	ՀՀ Սյունիքի մարզի Կապանի պղնձի և Շահումյանի ոսկի բազմամետաղային հանքավայրերը շրջապատող տարածք	ոսկի-բազմամետաղ	ԵՀԹՎ-29/070	13.04.07թ	15.04.16թ	գործող
21	<Պատանի երկրաբան> ՍՊԸ	ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի հ/դաշտի Արջիձորի բազմամետաղ	բազմամետաղ	ԵՀԹՎ 29/077	14.10.11թ	14.10.16թ	գործող
22	<Նիկելի սար> ՍՊԸ	ՀՀ Շիրակի մարզի Ամասիայի բազմամետաղ	բազմամետաղ	ԵՀԹՎ 29/078	14.10.11թ	14.10.16թ	գործող
23	<Նիկելի սար> ՍՊԸ	ՀՀ Շիրակի մարզի Ամասիայի ծարիր	ծարիր	ԵՀԹՎ 29/079	14.10.11թ	14.10.16թ	գործող
24	<Նիկելի սար> ՍՊԸ	ՀՀ Շիրակի մարզիՄուսաբեյլան- Բարգուշատի բազմամետաղ	բազմամետաղ	ԵՀԹՎ 29/080	14.10.11թ.	14.10.16թ.	գործող

25	<Գենտամայն> ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզի Վանք և Կալեր գյուղերի շրջակա տարածք (բազմամետաղ)	բազմամետաղ	ԵՀԹՎ-29/089	16.07.10թ	30.06.15թ	գործող
26	<Ակվագեո> ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզի Զիլ-Դարայի բազմամետաղի հանքերակում	բազմամետաղ	ԵՀԹ-29/097	30.08.12թ	30.09.15թ	Ընդերքօգտագործման իրավունքի դադարեցում 04.05.2015թ.
27	<Գեոմայնինգ> ՍՊԸ	ՀՀ Վայոց Ձորի մարզի Վարդենիսի բազմամետաղի հանքերակում	բազմամետաղ	ԵՀԹ-29/098	30.08.12թ	31.08.17թ	գործող
28	<Պոլիմետ կորպորացիա> հայկանադական ՀԶ> ՍՊԸ.	ՀՀ Տավուշի մարզի Վազաշենի ոսկի-բազմամետաղ	ոսկի-բազմամետաղ	ԵՀԹ-29/103	06.11.12թ	06.11.2017թ.	գործող
29	<Թաթաթուն> ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզ Այգեձորի պղինձ-մոլիբդենային հանքավայր /Թղկուտի տեղամաս/	պղինձ	ԵՀԹ-29/112	12.10.12թ	30.09.17թ.	գործող
30	<Թաթաթուն> ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզի Լիճքի պղինձի հանքավայր	պղինձ	ԵՀԹ-29/113	12.10.12թ	30.09.15թ	գործող
31	<Գի Մետալզ Ինվեսթմենթ Լիմիտեդ> ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզի Դաստակերտի տարածաշրջանի հարավային հատված (ոսկի-բազմամետաղ)	ոսկի-բազմամետաղ	ԵՀԹՎ-29/114	25.01.11թ.	30.12.17թ.	գործող
32	<ԱՐԱԼՈՒԱՆ>ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզի Շվանիձորի նեֆելինային սիենիտների երևակման տեղ	այլումին	ԵՀԹՎ-29/116	12.05.11թ	12.05.16թ	գործող

33	<Լեռ ԷՔՍ> ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզի Հանքասարի պղինձ-մոլիբդեն	պղինձ-մոլիբդեն	ԵՀԹ-29/118	13.11.12թ	30.08.17թ	գործող
34	<Սփայս սթիլ > ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզի Սվարանցի երկաթ	երկաթ	ԵՀԹՎ-29/122	08.12.10թ	07.11.15թ	գործող
35	<Նարիպրոֆ> ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզի Նոնաձորի պղինձ-սկլեբեր	պղինձ-սկլի	ԵՀԹ-29/124	22.04.13թ	22.04.16թ	գործող
36	<Գեղի Գոլդ> ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզի Գեղի գետի ավազանի հանքային դաշտ	սկլի	ԵՀԹ-29/125	15.11.12թ	30.09.17թ	գործող
37	<Վէն սթեյ Ըհեդ> ՓԲԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզի Սոթք գետի ցրոնային սկլի	սկլի	ԵՀԹՎ-29/131	16.07.10թ	30.06.15թ	գործող
38	<Արմենիան ինթերնեյշնլ գոլդ> ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզի Յարասարի սկլու արմատական հանքերակման շրջան	սկլի	ԵՀԹՎ-29/133	25.07.11թ	30.06.14թ	գործող
39	<Մեզո Գոլդ> ՍՊԸ	ՀՀ Արագածոտնի մարզի Թուխմանուկի սկլու հանքային դաշտի տարածքը՝ բացառությամբ թիվ ԼՎ-184 լեռնատեղանակաչման ակտով «ՄԵԳՈ-ԳՈԼԴ» ՍՊԸ-ին տրամադրված Թուխմանուկի սկլու հանքավայրի տարածքի	սկլի	ԵՀԹ 29/136	02.07.13թ	02.07.16թ	
40	«Գեղի Գոլդ» ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզի Գեղաքար Սարիգետ սկլի-բազմամետաղ	սկլի-բազմամետաղ	ԵՀԹ-29/140	18.01.13թ	30.12.17թ	
41	<ՎՀՀ> ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզի Որոտնավանքի սիլիկահողային ապարներ	այլումին	ԵՀԹՎ-29/141	16.08.11թ	30.06.16թ	Հրաժարման հավաստագիր 12.06.14թ.

42	«ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ	ՀՀ Սյունիքի մարզի Խաչաքարի ազնիվ մետաղ	ազնիվ մետաղներ	ԵՀԹ-29/154	31.01.13թ	30.09.15թ	գործող
43	<Սագամար> ՓԲԸ	ՀՀ Լոռու մարզի Փամբակ գետի և ՀՀ հյուսիսային պետական սահմանի միջև ընկած ոսկի-բազմամետաղների տեղամաս	բազմամետաղ	ԵՀԹ-29/155	31.01.13թ	31.12.15թ	գործող
44	«Գեղքեր» ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզի Ատկիզի ոսկի-բազմամետաղ	ոսկի-բազմամետաղ	ԵՀԹ-29/156	06.02.13թ	31.12.15թ	Հրաժարման հավաստագիր 07.08.2015թ.
45	<Մոլիբդենի Աշխարհ> ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզի Դաստակերտի հանքային դաշտի Շեկասարի պղինձ-մոլիբդեն	պղինձ-մոլիբդեն	ԵՀԹ-29/157	06.02.13թ	31.12.15թ	գործող
46	<Արատտա մայնինգ> ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզի Մասրիկի ոսկու հանքերևակման կենտրոնական տեղամաս	ոսկի	ԵՀԹ 29/164	11.04.13թ	11.04.16թ	Հրաժարման հավաստագիր 02.08.2014թ.
47	<Վլանժ> ՍՊԸ	ՀՀ Արագածոտնի մարզի Թուփսմանուկի հանքային դաշտի Շողակաթի ոսկեբեր հեռ, տարածք	ոսկի	ԵՀԹ-29/168	22.05.13թ	22.05.16թ	գործող
48	<Դի ԷՅ Մայնինգ> ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզի Խղեբանցու ոսկի	ոսկի	ԵՀԹ-29/169	22.05.13թ	22.05.16թ	գործող
49	<Դի ԷՅ Մայնինգ> ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզի Թաղամիրի ոսկի	ոսկի	ԵՀԹ-29/170	22.05.13թ	22.05.16թ	գործող

50	<Սթորթրանս> ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզի Տաշտունի բազմամետաղ	բազմամետաղ	ԵՀԹ-29/172	14.06.13թ	14.06.16թ	Հրաժարման հավաստագիր 26.02.2016թ.
51	<Նանարփի> ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզի Սոթք գետի ավազանի ցրոնային ոսկի	ոսկի	ԵՀԹ29/176	20.06.13թ	20.06.16թ	գործող
52	<Բակտեկ էկո> ՍՊԸ	ՀՀ Լոռու մարզի Լեռնաջրի ոսկի բազմամետաղ	ոսկի-բազմամետաղ	ԵՀԹ29/177	12.07.13թ	12.07.16թ	գործող
53	<Կապպեր մայնինգ> ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզի Թթուջրի բազմամետաղ	բազմամետաղ	ԵՀԹ-29/178	12.07.13թ	12.07.16թ	գործող
54	< Կապպեր մայնինգ>> ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզի Տիգրանաբերդի բազմամետաղ	բազմամետաղ	ԵՀԹ-29/179	12.07.13թ	12.07.16թ	գործող
55	«Ռակ Միներալզ Ընդ Մեթալզ Ինվեսթմենթս Արմենիա» ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզի Լեռնաշենի ոսկի-բազմամետաղային հանքային դաշտի «Մրոց-Դարպաս» երևակում	ոսկի-բազմամետաղ	ԵՀԹ-29/184	01.10.13թ.	01,10,16թ	Հրաժարման հավաստագիր 27.01.2015թ
56	«Ռակ Միներալզ Ընդ Մեթալզ Ինվեսթմենթս Արմենիա» ՍՊԸ	ՀՀ Տավուշի մարզի Կառնուտ-Ծակքար հանքային դաշտի հեռանկարային տարածք (բազմամետաղ)	բազմամետաղ	ԵՀԹ-29/185	01.10.13թ.	01,10,16թ	Հրաժարման հավաստագիր 27.01.2015թ
57	«Աշոտ Մելքոնյան և Որդիներ» ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի հանքային շրջանի Սիսակերտի հեռանկարային տեղամաս (ոսկի, արծաթ, կապար, ցինկ, պղինձ)	ոսկի, արծաթ, կապար, ցինկ, պղինձ	ԵՀԹ 29/189	21.11.13թ.	21,11,16թ	գործող

58	«Պանարաքս Միներալս» ՓԲԸ	ՀՀ Վայոց Ձորի մարզի Արփա գետի աջափնյա ավազանի «Պանարաքս Միներալս» պղինձ-բազմամետաղային երևակում	պղինձ-բազմամետաղ	ԵՀԹ-29/160	27.11.13թ.	27.11.16թ	գործող
59	< Կապպեր մայնինգ>> ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզի Կուտականի բազմամետաղ	բազմամետաղ	ԵՀԹ-29/194	27.12.13թ	27.12.16թ	գործող
60	«ՋՈՒԼԻ» ՍՊԸ	ՀՀ Վայոց Ձորի մարզի Ելփինի պղինձ-մոլիբդենային երևակում	պղինձ-մոլիբդեն	ԵՀԹ-29/192	04.02.14թ	04.02.17թ	գործող
61	«ԼԵՎԳԵՎ» ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզի Կապանի պղնձի հանքավայրի կենտրոնական հանքի նոր տրանսպորտային հանքուղու ելքից արտահոսող հանքայնացված ջրի երկրաբանական ուսումնասիրություն (պղնձի և այլ մետաղների պարունակության որոշում՝ օ. հ. պղինձ)	պղնձի և այլ մետաղների պարունակության որոշում՝ օ. հ. պղինձ	ԵՀԹ-29/200	17.04.14թ.	30.06.16թ.	գործող
62	«ԳԵՈ ԳՈԼԴ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզի Ալվանք-Նոնաձորի ոսկի-բազմամետաղային հանքերևակում	ոսկի-բազմամետաղ	ԵՀԹ-29/202	12.09.14թ	12.09.17թ	գործող
63	«Ալյուվիալ Գոլդ Մայնինգ» ՓԲԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզի Մասրիկի ոսկու հանքերևակում	ոսկի	ԵՀԹ-29/203	23.10.14թ.	23.10.17թ	գործող

64	«ՎԻԿՏՈՐԻԱ ՍԻԼՎԵՐ» ՍՊԸ	ՀՀ Լոռու մարզի Մարցի գետի հանքային դաշտի Մարց-Պրվաշեն-Բուդաղիձոր տեղամաս (ոսկի-բազմամետաղ)	ոսկի-բազմամետաղ	ԵՀԹ-29/204	04.11.14թ.	04.11.17թ	գործող
65	«ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ ԳՈԼԴ» ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծարասարի արմատական ոսկու հանքերևակման սահմաններ	ոսկի	ԵՀԹ-29/205	18.02.15թ.	18.02.18թ	գործող
66	«ՄԱՅՆԻՆԳ ՍԼՈՒՇՆԱ» ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզի Գետիկ գետի միջին հոսանքի ավազանում գտնվող ընդերքի տեղամաս (ոսկի)	ոսկի	ԵՀԹ-29/199	18.02.15թ.	18.02.18թ	գործող
67	«ՌԱՄ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզի Սոթք գետի ավազանի Տիգրանագետ վտակի վերին հոսանքի ոսկեբեր ցրոնների հանքերևակում	ոսկի	ԵՀԹ-29/213	22.07.15թ.	30.06.18թ.	գործող
68	«ԴՐԱՂԵԳ ՄԵՏԱԼ» ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզի Կուլթի ոսկեբեր տեղամասի տարածք	ոսկի	ԵՀԹ-29/214	22.07.15թ	30.06.18թ.	Հրաժարման. հավաստագիր 14.07.16թ
69	«ԷՔՈՒԻՎԵՍՏ ԱԼԼԻԱՆՍ ՖԱՈՒՆԴԵՅՇՆ» ՍՊԸ	ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի հանքային շրջանի ՈՒռուտի հանքային դաշտի տեղամաս (բազմամետաղ)	բազմամետաղ	ԵՀԹ-29/212	27.07.15թ.	30.06.18թ	գործող

70	«ԵՎՐԱՍԻԱ ԷՔՍՓԼՈՐԵՅՇՆ» ՍՊԸ	ՀՀ Տավուշի մարզի Այգեծորի պղինձ- պորֆիրային երևակում	պղինձ	ԵՀԹ-29/216	03.09.15թ.	31.12.17թ.	Հրաժարման հավաստագիր 15.12.2015թ
71	«ՍԵՆՏԵՐՐԱ ՄԱՅՆԻՆԳ» ՓԲԸ	ՀՀ Վայոց Ձորի մարզ, Կապույտի բազմամետաղների հանքերևակում	բազմամետաղ	ԵՀԹ-29/224	25.12.15թ	31.12.18թ	գործող
72	«ՆԱՐԻՊՐՈՖ» ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզ, Նոնաձորի (Նյուվաղի) պղինձ-ոսկեբեր հանքերևակում	պղինձ-ոսկի	<u>ԵՀԹ-29/219</u>	02.04.16թ.	31.03.19թ	գործող
73	«ԹԱԹՍԹՈՒՆ» ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզ, Լիճքի բազմամետաղների հանքային դաշտ	բազմամետաղ	ԵՀԹ-29/225	11.06.16թ.	31.03.19թ	գործող
74	«ՄԱՅՆԻՆԳ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ	ՀՀ Վայոց Ձորի մարզ, Վաղաշենի բազմամետաղների հանքերևակում	բազմամետաղ	ԵՀԹ-29/228	02.11.16թ.	30.09.19թ	գործող
75	«ՂԱՐԱԳՈՒԼՅԱՆՆԵՐ» ՓԲԸ	ՀՀ Սյունիքի մարզ, Վերին Վարդանիձորի ոսկի- բազմամետաղային հանքային դաշտ	բազմամետաղ	ԵՀԹ-29/229	25.10.16թ.	30.09.19թ	գործող
76	«ԷՆԵՐԳՈ ԻՆՎԵՍՏ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲԸ	ՀՀ Տավուշի մարզի Մուրխուզի բազմամետաղների հանքերևակում	բազմամետաղ	ԵՀԹ-29/238	13.03.17թ.	31.12.19թ	գործող
77	«ԱՅՐՆ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ	ՀՀ Լոռու մարզի Բազումի երկաթի երևակում	երկաթ	ԵՀԹ-29/236	23.03.17թ.	31.12.19թ	գործող
78	«ՊՐԵՄԻՈՒՄ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ	ՀՀ Տավուշի մարզի Կառնուտ- Սառնաղբյուրի պղինձ- բազմամետաղային	պղինձ- բազմամետաղ	ԵՀԹ-29/237	25.02.17թ	31.12.19թ	գործող

		հանքային դաշտի տարածք					
79	«ԳՈՒԴԵՆ ԼԵՆԴ» ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզի Արևիսի բազմամետաղների հանքային դաշտ	բազմամետաղ	ԵՀԹ-29/245	28.06.17թ.	31.03.20թ	գործող
80	«ՄԵՏԱԼՍ ՄԱՅՆԻՆԳ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզի Շամբի բազմամետաղների հանքերևակում	բազմամետաղ	ԵՀԹ-29/246	28.06.17թ.	31.03.20թ	գործող

Հավելված 10. ԱՃԹՆ ստանդարտի պահանջների ընդգրկում՝ նախնական ուսումնասիրության տեսչտում

ԱՃԹՆ ստանդարտի պահանջը	Նախնական ուսումնասիրության բաժին
2.1	2.1, 2.2, 3
2.2	2.1, 4.1
2.3	4.1, 9
2.4	8.3, 9
2.5	5
2.6	-
3.1	7
3.2	7
3.3	7
4.1	6, 6.1, 6.12, 9, 11.1
4.2	6.1, 6.6
4.3	6.1, 6.7
4.4	6.8
4.5	6.9
4.6	6.1, 11.1
4.7	6.10, 6.14, 9
4.8	6.15
4.9	6.5, 6.1, 11.1
5.1	6.4
5.2	2.3
5.3	-
6.1	6.13
6.2	-
6.3	7, 7.1

Հավելված 11. Տվյալների հասանելիության վերաբերյալ տեղեկատվության աղյուսակ

Տվյալներ (ֆինանսական հոսք, այլ տեսակի տեղեկատվություն)	Ունի՞ ընկերություն ը դրանցից օգտվելու հնարավորությո ւն (ընկերության կամ ծրագրի մակարդակու մ)	Որ պետական մարմինն է (կամ մարմիններն են) տիրապետում այդ տեղեկատվությու նը	Պետական մարմնի ունեցած տվյալների ազդեցացման աստիճանը	Պետական մարմինների ունեցած տեղեկատվության հասանելիության աստիճանը			Որպեսզի տեղեկատվությունը հասանելի դառնա ԱՃԹՆ տեղեկատվության կազման նպատակով, ի՞նչ լուծումներ են անհրաժեշտ՝ օրենսդրական ակտ թե այլ միջոց:
				a. Որտեղ է հրապար ակվում արդիակ ան տեղեկա տվություն նը (կատար ել հղում)	b.Տեղեկատվությու ն չի հրապարակվում, այլ տրամադրվում է ցպահանջ	c. Տեղեկատվությունը չի հրապարակվում՝ և չի տրամադրվում՝ օրենսդրական խոչընդոտների պատճառով	
ԱՃԹՆ ստանդարտի պահանջ (պահանջի համարը) և լրացուցիչ տեղեկատվություն							
Իրավական դաշտի նկարագրություն 2.1(ա)	Կիրառական չէ	ԱՆ	Կիրառական չէ	www.arlis.a m			Չկա. Իրավական դաշտի նկարագրությունը կարելի է ներառել ՀՀ ԱՃԹՆ վեբ-կայքում՝ որպես առանձին էջ
Ընթացիկ բարեփոխումներին վերաբերող	Կիրառական չէ	ԷԵԲՊՆ, ԲՆ, ԱՆ	Կիրառական չէ	www.e- draft.am կայքում՝			Չկա. Ընթացիկ բարեփոխումների նկարագրությունը

փաստաթղթեր 2.1(բ)				երբ օրենսդրակ ան ակտը պատրաստ է հանրությա ն քննարկմա ն			կարելի է ներառել ՀՀ ԱԶԹՆ վեբ-կայքում՝ որպես առանձին էջ
ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ							
Լիցենզիայի փոխանցման կամ շնորհման գործընթացի նկարագրություն 2.2(ա)(i)		ԷԵԲՊՆ	Կիրառական չէ	www.arlis.a m			Չկա
Կիրառվող տեխնիկական և ֆինանսական չափանիշներ - 2.2(ա)(ii)		ԷԵԲՊՆ	Կիրառական չէ	www.arlis.a m			Չկա. NB www.arlis.am -ը տալիս է օրենքով նախատեսված տեխնիկական և ֆինանսական չափանիշների հասանելիություն: ԷԵԲՊՆ-ի կողմից փաստացի օգտագործվող չափանիշները հասկանալու համար անհրաժեշտ է դիմում:

Լիցենզիա ստացած անձը (անձինք) - 2.2(ա)(iii)		ԷԵԲՊՆ	Կիրառական չէ	https://www.e-gov.am/lists/ http://www.minenergy.am/page/422 www.geofund.am/en/issued-permits/			Չկա
Լիցենզիաների փոխանցումը կամ շնորհումը կարգավորող իրավական և կանոնակարգող դաշտից կատարված էական շեղումները – 2.2(ա)(iv)		ԷԵԲՊՆ	Կիրառական չէ		Կարելի է խնդրել ԷԵԲՊՆ-ից		
ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ							
Լիցենզառուներ – 2.3(բ)(i)	Այո	ԷԵԲՊՆ	Տե՛ս ստորև	https://www.e-gov.am/lists/			Հարկ է լուծել երեք աղբյուրների որոշակի անհամապատասխանությունների խնդիրները

				http://www.minenergy.am/page/422 www.geofund.am/en/issued-permits/			(օր. ի տարբերություն մյուս երկու վեբ կայքերի՝ geo-fund.am -ում թվարկված են ավելի շատ արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թույլտվություններ և ավելի քիչ թվով՝ երկրաբանական ուսումնասիրության նպատակով ընդերքօգտագործման թույլտվություններ, ինչպես նաև չկան այս տվյալների ստուգաճշտման ամսաթվի մասին տեղեկություն:)
Լիցենզավորված տարածքի կոորդինատները – 2.3(բ)(ii)	Այո, իրենց սեփական լիցենզիայի առնչությամբ	ԷԵԲՊՆ	Տվյալները վեբ-կայքերում բացակայում են		Կարելի է խնդրել ԷԵԲՊՆ-ից		Վեբ-կայքերի ցուցակներում անհրաժեշտ է ավելացնել այդուհանդերձ, որտեղ կներառվեն այս տվյալները:
Հայտի ներկայացման ամսաթիվը – 2.3(բ)(iii)	Այո, իրենց սեփական լիցենզիայի առնչությամբ	ԷԵԲՊՆ	Տվյալները վեբ-կայքերում բացակայում են		Կարելի է խնդրել ԷԵԲՊՆ-ից		Վեբ-կայքերի ցուցակներում անհրաժեշտ է ավելացնել այդուհանդերձ, որտեղ կներառվեն այս

							տվյալները:
Լիցենզիայի շնորհման ամսաթիվը - 2.3(բ)(iii)				https://www.e-gov.am/lists/ http://www.minenergy.am/page/422 www.geofund.am/en/issued-permits/			
Լիցենզիայի տևողությունը - 2.3(բ)(iii)	Այո	ԷԵԲՊՆ	Տվյալները կոնկրետ թվարկված չեն, այլ նշված է միայն յուրաքանչյուր լիցենզիայի ուժի մեջ մտնելու և ավարտվելու ամսաթիվը, որից կարելի է բխեցնել տևողությունը	https://www.e-gov.am/lists/ http://www.minenergy.am/page/422 www.geofund.am/en/issued-permits/			Վեբ կայքերում կարելի է սյունակ ավելացնել այս ցուցակներում՝ կոնկրետ նշելով յուրաքանչյուր լիցենզիայի գործողության ժամկետը
Արդյունահանվող ապրանքա	Այո, իրենց սեփական	ԷԵԲՊՆ	Տվյալները վեբ-կայքերից		Կարելի է խնդրել ԷԵԲՊՆ-ից		Վեբ-կայքերում անհրաժեշտ է ավելացնել

տեսակը - 2.3(բ)(iv)	լիցենզիայի առնչությամբ		բացակայում են, թեև որոշ դեպքերում ապրանքատեսա կը կարելի է գուշակել ընկերության կամ հանքավայրի անվանումից				սյունակ՝ այս ցուցակներում տվյալները ներառելու համար
ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ							
Պայմանագրերի և լիցենզիաների հրապարակային բացահայտում (խրախուսվում է) – 2.4(ա)	Միայն իրենց սեփական լիցենզիաների մասով	ԷԵԲՊՆ	Կիրառական չէ		Շահագրգիռ կողմերը հայտնում են, որ որոշ դեպքերում կարող է տրամադրվել պայմանագրերից օգտվելու հնարավորություն	Շահագրգիռ կողմերը հայտնում են, որ որոշ դեպքերում մերժել են պայմանագրերի տրամադրումը	Չի հանդիսանում ԱՃԹՆ ստանդարտի պահանջ: Անհրաժեշտ է միայն ունենալ բացահայտման քաղաքականություն:
Կառավարության քաղաքականությու նը պայմանագրերի և լիցենզիաների բացահայտման վերաբերյալ – 2.4(բ)	Կիրառական չէ	Կառավարությու ն	ԱՃԹՆ ստանդարտում նշված է, որ «պայմանագիր» եզրույթը ներառում է հավելվածները, փոփոխություննե րը և այլն (2.4(գ)(ii)&(iii))		Տե՛ս վերը	Տե՛ս վերը	Բացահայտման վերաբերյալ քաղաքականությունը պարտադիր է – օր. Կառավարության արձանագրային որոշում

ԻՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ							
<p>Իրական սեփականատե</p> <p>րերի ռեգիստրի վարում (խորհուրդ է տրվում) – 2.5(ա)</p>	Ոչ	<p>Սահմանափակ տեղեկատվություն կա ԱՆ -ում (պետական ռեգիստր), Կենտրոնական բանկում (դեպոզիտարիա), ԷԵԲՊՆ (լիցենզիայի դիմողները որոշ տվյալներ են ներկայացնում սեփականատերերի վերաբերյալ)</p>	<p>Ինչպես նշվել է, տեղեկատվությունը սահմանափակ է, կարող է սահմանափակ վել միայն մայր ընկերության անվան նշմամբ</p>	<p>www.e-register.am,</p> <p>Կենտրոնական դեպոզիտարիա</p>			ԱՃԹՆ պարտադիր պահանջ չէ
<p>Իրական սեփականության բացահայտման վերաբերյալ կառավարության քաղաքականությունը և բազմաշահառու խմբի քննարկումը – 2.5(բ)(i)</p>	Կիրառական չէ	Կառավարություն/ԲՇԽ	Կիրառական չէ				Քաղաքականությունը պարտադիր է. օրինակ՝ ԲՇԽ արձանագրություններ և Կառավարության արձանագրային որոշում
<p>Ճանապարհային քարտեզ (հունվար, 2018թ.) - 2.5(բ)(ii)</p>	Կիրառական չէ	ՎՋՄԲ, ԲՇԽ	Կիրառական չէ				Առանձին պահանջ, որ ԲՇԽ-ն հրապարակի ճանապարհային քարտեզը: ՎՋՄԲ-ը

							ներկայումս աջակցում է պատրաստման գործընթացին
Իրական սեփականության մասին տեղեկություններ (հունվար 2020 թ.) – 2.5(գ)	Ներկայումս հասանելի չեն	Կառավարություն – գերատեսչությունը պետք է որոշվի	Անհրաժեշտ կլինի հաշվի առնել 2.5(գ)-(զ) պահանջները				Ներկայումս պարտադիր չէ
Իրական սեփականատիրոջ ինքնության մասին տեղեկություններում պետք է ներառվեն իրական սեփականատիրոջ անունը, քաղաքացիությունը և բնակության երկիրը, ինչպես նաև քաղաքական ազդեցություն ունեցող անձանց անունները – 2.5(դ)	Ներկայումս հասանելի չեն	Կառավարություն – գերատեսչությունը պետք է որոշվի	Տե՛ս վերը				Ներկայումս պարտադիր չէ
ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ – 2.6							
Կիրառական չէ							
ՀԵՏԱԽՈՒԶՈՒՄ							

<p>Արդյունահանող ճյուղերի ամփոփ նկարագիրը, այդ թվում՝ իրականացվող ցանկացած կարևոր հետախուզական աշխատանքները – 3.1</p>	<p>Կիրառական չէ</p>	<p>ԷԵԲՊՆ, ԲՇԽ</p>	<p>«կարևոր հետախուզական աշխատանքներ» հասկացության հստակ սահմանման բացակայություն</p>	<p>https://www.e-gov.am/lists/ http://www.minenergy.am/page/422 www.geofund.am/en/issued-permits/</p>			<p>Չկա. արդյունահանող ճյուղերի ամփոփ նկարագիրը կարող է ներկայացվել որպես ՀՀ ԱՃԹՆ վեբ-կայքի էջ</p>
<p>ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒՄ</p>							
<p>ԱՃԹՆ-ի զեկույցում ընդգրկված ֆիսկալ տարվա արդյունահանման մասին տվյալները, այդ թվում՝</p>	<p>Կիրառական չէ</p>	<p>ԱՎԾ</p>	<p>Առկա են տվյալներ՝ ըստ մարզերի</p>	<p>www.armstat.am</p>			

<p>արդյունահանման ընդհանուր ծավալները և արդյունահանման արժեքը՝ ըստ ապրանքի և նպատակահարմարության դեպքում՝ ըստ նահանգի (շրջանի) – 3.2</p>							
<p>ԱՐՏԱՀԱՆՈՒՄ</p>							
<p>ԱՃԹՆ-ի զեկույցում ընդգրկված ֆիսկալ տարվա արտահանման մասին տվյալները, այդ թվում՝ արտահանման ընդհանուր ծավալները, արտահանման արժեքը՝ ըստ ապրանքի և նպատակահարմարության դեպքում, ըստ ծագման նահանգի (շրջանի) – 3.3</p>	<p>Կիրառական չէ</p>	<p>ԱՎԾ</p>	<p>Ըստ մարզերի տվյալներ առկա չեն</p>	<p>www.armstat.am</p>			
<p>ՀԱՐԿԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՄԱԿՈՂՄԱՆԻ</p>							

ԲԱՅԱՀԱՅՏՈՒՄ						
<i>Ընկերություններ – կատարված վճարումների բացահայտում</i>						
Շահութահարկեր – 4.1(բ)(iii)	Այո	Գիրառական չէ				Տվյալները ընկերությունների հաշվետվություններում են, սակայն դրանք հանրամատչելի են միայն եթե այդ հաշվետվությունները հրապարակվում են
Ռոյալթիներ – 4.1(բ)(iv)	Այո	Գիրառական չէ				
Շահաբաժիններ – 4.1(բ)(v)	Այո, եթե կիրառական է	Գիրառական չէ	Աննշան վճարումները կարելի է առանձին չթվարկել՝ ընկերությունների հրապարակված հաշիվներում			
Հավելավճարներ – 4.1(բ)(vi)	Այո, եթե կիրառական է	Գիրառական չէ				
Լիցենզիայի տրամադրման տուրքերը, վարձակալության վճարները, մուտքի վճարները և լիցենզիաների և/կամ կոնցեսիաների համար կատարվող այլ վճարները – 4.1(բ)(vii)	Այո					
Կառավարությանը կատարվող ցանկացած այլ կարևոր վճարումները և	Այո, եթե կիրառական է	Գիրառական չէ	Նույնը			Ընդերքի մասին կատարված փոփոխությունները պարտավորեցնում են լիցենզիա ունեցողներին՝ ապաստանագրված ներկայացնել իրենց հարկերն ու մյուս վճարումները
						Նույնը

կառավարության էական օգուտը – 4.1(բ)(viii)						
<i>Կառավարություն – ստացված վճարումների բացահայտում</i>						
Շահութահարկեր – 4.1(բ)(iii)		ՊԵԿ	ՊԵԿ-ը տիրապետում է ըստ ընկերություններ ի ապագա գրեգա ցված լիարժեք սվյալների	www.taxser.vice.am և www.harkat.u.am		Հարկային օրենսդրության փոփոխություններ, ըստ որի Պետական եկամուտների կոմիտեն պարտավորվում է ապագա գրեգացված եղանակով բացահայտել նախանշված յուրաքանչյուր հաշվետու ընկերության եկամտային հոսքերը
Ռոյալթիներ– 4.1(բ)(iv)		ՊԵԿ		կայքերում թվարկված են 1000 խոշոր հարկատու ները:		
Շահաբաժիններ – 4.1(բ)(v)		ՊԵԿ		Մահմանա փակումնե ր՝		
Հավելավճարներ– 4.1(բ)(vi)		ՊԵԿ		ա) մետաղակ ան հանքարոյո ւնաբերոյո ւն ոլորտի այն ընկերոյո ւնները, որոնք խոշոր 1000 հարկատու		
Լիցենզիայի տրամադրման տուրքերը, վարձակալության վճարները, մուտքի վճարները և լիցենզիաների և/կամ կոնցեսիաների համար կատարվող այլ վճարները – 4.1(բ)(vii)		ՊԵԿ				

				ների ցուցակում չկան, թվարկված չեն. բ) եկամտայի ն հոսքերը միայն մասամբ են ապագա գրե գացված		
Կառավարությանը կատարվող ցանկացած այլ կարևոր վճարումները և կառավարության էական օգուտը – 4.1(բ)(viii)		ԲՆ – Բնապահպան ական ֆոնդ			Բնապահպանական ֆոնդին կատարվող վճարումները որևէ վեբ-կայքում հասանելի չեն. ԲՆ-ը տվյալները հրապարակել է նախնական ուսումնասիրության նպատակներով:	Փոփոխություններ Հնդերքի մասին օրենսգրքում, որը կսահմանի ԲՆ պարտականությունը՝ հրապարակելու ընկերությունների կողմից Բնապահպանական ֆոնդին կատարված վճարումների մասին ապագա գրեգացված տվյալներ
Ընդհանրացված տեղեկություններ ԱՃԹՆ-ի զեկույցի շրջանակներում համաձայնեցված տարբեր հոսքերից	Կիրառական չէ	ՊԵԿ	ՊԵԿ-ն ունի Ագրեգացված ընդհանուր տվյալներ՝ յուրաքանչյուր		Վեբ-կայքերում չկան ագրեգացված տվյալներ՝ ըստ ոլորտի եկամտային հոսքերի, սակայն ենթադրվում է, որ	Փոփոխություններ Հարկային օրենսգրքում, որը կսահմանի Պետական եկամուտների կոմիտեի՝ ոլորտի յուրաքանչյուր

ստացված ընդհանուր եկամուտների չափի վերաբերյալ ներառյալ համաձայնեցված էականության շեմերից ցածր եկամուտները - 4.1(դ)			եկամտային հոսքի մասով, սակայն կարիք ունեն ստանալու հաշվետու ընկերություններ ի ցանկը		ՊԵԿ-ը ագրեգացված ցուցանիշները տրամադրում է ցպահանջ		եկամտային հոսքի վերաբերյալ ագրեգացված ցուցանիշներ հրապարակելու պարտականությունը
ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԲԱԺՆԻ ՎԱՃԱՌՔ - 4.2							
Կիրառական չէ							
ԵՆԹԱԿԱՌՈՒՅՎԱԾՔԻ ՀԱՄԱՐ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՊՐԱՆՔԱՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ - 4.3							
Կիրառական չէ							
ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ							
Կառավարությունը բացահայտում է նավթի, գազի և օգտակար հանածոների փոխադրումից ստացված եկամուտները - - 4.4	Կիրառական չէ	ՊԵԿ	Ենթադրվում է, որ ՊԵԿ-ը տիրապետում է ըստ ընկերությունների ապաագրեգացված տվյալների, սակայն դեռևս ի վիճակի չի եղել		Վեր-կայքերում չկա ոլորտի եկամտային հոսքերի ցուցանիշներ, սակայն ենթադրվում է, որ ՊԵԿ-ը ագրեգացված ցուցանիշները տրամադրում է		Հարկային օրենսդրության փոփոխություն, որը կսահմանի Պետական եկամուտների կոմիտեի՝ այս եկամտային հոսքի մանրամասները բացահայտելու պարտականությունը

			նախանշել առանձին էկամտային հոսք ունենալու իրավական հիմքը		ցպահանջ		
(Եթե կիրառական է, լրացուցիչ պահանջներ՝ ա-դ)							
ՊԵՏԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ – 4.5							
Կիրառական չէ							
ՏԵՂԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ ԿԱՏԱՐՎՈՂ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ							
<i>Ընկերություններ – կատարված վճարումների բացահայտում</i>							
Ընկերությունների կողմից տեղական կառավարման մարմիններ կատարված էական վճարումներ - – 4.6	Միայն տեղական հարկեր վճարելու իրենց սեփական պարտավորությո ւնների առնչությամբ	Տեղական ինքնակառավ արման մարմիններ (ՏԻՄ)	Ընկերություններ ի հրապարակված հաշվետվություն ներում կարելի է առանձին չթվարկել այս վճարումները, եթե գումարները փոքր են		Տվյալները առկա են ընկերությունների հաշվետվություններում, սակայն հրապարակային են դառնում միայն հաշվետվությունների հրապարակման դեպքում		Փոփոխությունների Ընդերքի մասին օրենսգրքում, որը կսահմանի լիցենզիա ունեցողի՝ ՏԻՄ -երին վճարված հարկերի և այլ վճարումների ապաստանագրված մանրամասները ներկայացնելու

						պարտականությունը
<i>Կառավարություն – ստացված վճարումների բացահայտում</i>						
Ընկերությունների կողմից տեղական կառավարման մարմիններ կատարված էական վճարումներ – 4.6	Կիրառական չէ	Տեղական ինքնակառավարման մարմին (ՏԻՄ)	Յուրաքանչյուր ՏԻՄ ի վիճակի պետք է լինի ներկայացնել հաշվետու ընկերության կողմից վճարվելիք գումարները, Մակայն հրապարակված տեղեկատվության մեջ ներկայացվում են միայն ընդհանրացված թվեր	www.mtad.am կայքում տրված է միայն ընդհանրացված (ագրեգացված) տեղեկատվություն (ըստ համայնքի, ըստ եկամտային հոսքի, այլ ոչ ըստ հարկատուի)		Հստակեցնել ՏԻՄ-երի ցանկը: Օրենսդրական փոփոխություններ (հիմնականում՝ Տեղական ինքնակառավարման մասին օրենքում և/կամ հարկային օրենսդրության մեջ), որը կսահմանի տեղական համայնքների պարտականությունը՝ հրապարակելու ապագրեգացված տվյալներ ներկայացված հաշվետու ընկերություններից ստացված հողի հարկի, գույքահարկի և այլ եկամտային հոսքերի վերաբերյալ: ՏԿԶՆ-ը պետք է համադրի տվյալները և ներկայացնի անկախ ադմինիստրատորին, քանի որ ՏԻՄ-երը չունեն օնլայն ներկայացնելու

							կարողություն:
ԱՊԱԱԳՐԵԳԱՑՄԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ							
<i>Ընկերություններ – կատարված վճարումների բացահայտում</i>							
Պահանջվում է հաշվետվությունների ներկայացում ծրագրերի մակարդակով – 4.7	Yes, in respect of their own projects.	Կիրառական չէ	Ընկերություններին ներքին հաշվետվություններում ծրագրերը առանձնացված են, սակայն դա, հնարավոր է, չարտացոլվի առդիտորանցած հաշվետվություններում		Ընկերությունների սեփական հաշվետվություններում այդ տվյալները կան, սակայն դրանք հանրությանը հասանելի են դառնում միայն այդ հաշվետվությունների հրապարակման դեպքում		Փոփոխություններ Ընդերքի մասին օրենսգրքում, որը կսահմանի լիցենզիա ունեցողի՝ ըստ ծրագրերի ապաստանագրված եկամտային հոսքերը բացահայտելու պարտականությունը
<i>Կառավարություն– ստացված վճարումների բացահայտում</i>							
Պահանջվում է հաշվետվությունների ներկայացում ծրագրերի մակարդակով – 4.7	Կիրառական չէ	ՊԵԿ	ՊԵԿ-ի տիրապետում է միայն եկամտային հոսքերին՝ ըստ իրավաբանական անձանց, այլ ոչ ըստ ծրագրերի	www.taxser.vice.am և www.harkat.u.am կայքերում թվարկված են խոշոր 1000 հարկատուները, սակայն			Փոփոխություններ հարկային օրենսդրության մեջ, որը կսահմանի Պետական եկամուտների կոմիտեի՝ ըստ ծրագրերի եկամտային հոսքերը բացահայտելու պարտականությունը, սակայն սա կախված է այն հանգամանքից, թե

				ծրագրերն առանձին թվարկված չեն			որքանով ընկերությունները կտրամադրեն այդ տեղեկությունները ՊԵԿ-ին:
ՏԿՅԱԼՆԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ – 4.8							
ԱՃԹՆ-ն իրականացնող պետությունները պարտավոր են ներկայացնել իրենց առաջին ԱՃԹՆ զեկույցը ԱՃԹՆ-ի թեկնածու դառնալուց հետո 18 ամսվա ընթացքում – 4.8(ա) ԱՃԹՆ-ն իրականացնող պետությունները պետք է բացահայտեն ոչ ավելի, քան երկու տարվա վաղեմություն ունեցող տվյալներ – 4.8(բ)							2016թ. տվյալների ներկայացումը հաշվետու ընկերությունների կողմից պետք է կատարվի ժամանակին՝ առաջին զեկույցը ներկայացնելու համար (վերջնաժամկետը՝ 2018թ. սեպտեմբեր): Իդեալական տարբերակում, Այդ տվյալները պետք է անկախ ադմինիստրատորին տրամադրվեն ոչ ուշ քան 2018թ. մայիս ամիսը: Եթե 2017 թ. տվյալները ևս պետք է բացահայտվեն, ապա հարկ է ուշադրություն դարձնել ընկերությունների հաշվետվությունների

							Ժամանակին ներկայացմանը, հատկապես, եթե պետք է կիրառվի հաշվեգրման մեթոդը:
ՏՎՅԱԼՆԵՐԻ ՈՐԱԿ ԵՎ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ							
Ընկերությունների վճարումները պետք է ենթարկվեն վստահելի. անկախ աուդիտի իրականացման միջազգային ստանդարտների կիրառմամբ	Խոշոր հաշվետու ընկերություններ ից միայն երկուսն են ներկայումս հրապարակում իրենց անկախ աուդիտների արդյունքները	www.azdarar.am կայքում թվարկված են բաց բաժնետիրական ընկերությունների հրապարակված հաշվետվությունները		www.azdara.r.am կայքում թվարկված են բաց բաժնետիրական ընկերությունների հրապարակված հաշվետվությունները			Մշակվել է օրենսդրական նախագիծ, որի նպատակը անկախ աուդիտի պարտադիր պահանջների խստացումն է, սակայն դեռևս հստակ չէ, թե այն երբ կընդունվի
Ընկերությունների վճարումները պետք է ենթարկվեն վստահելի. անկախ աուդիտի իրականացման միջազգային ստանդարտների	Կիրառական չէ	ՊԵԿ, Վերահսկիչ պալատ	Կիրառական չէ				Օրենսդրական նախագծով, որի ուժի մեջ մտնելը նախատեսվում է 2019 թ.-ին, ակնկալվում է, որ Վերահսկիչ պալատի լիազորությունները կընդլայնվեն և կներառվի նաև պետական

կիրառմամբ							եկամուտների աուդիտը
ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՈԼՈՐՏԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ							
Արդյունահանող ոլորտի եկամուտների մուտքագրում պետական բյուջե – 5.1(ա)	Կիրառական չէ	Ֆին.նախ		Պետական բյուջեի մասին օրենսդրություն			
Այն դեպքերում, երբ եկամուտները չեն մուտքագրվում պետական բյուջե, այդ եկամուտների տեղաբաշխումները պետք է պարզաբանվեն՝ կիրառելիության դեպքում ներառելով հղումներ համապատասխան ֆինանսական հաշվետվություններին. օր.՝ ազգային բարեկեցության և զարգացման հիմնադրամները, տեղական կառավարման	Կիրառական չէ	ԲՆ – Բնապահպանական ֆոնդ Տեղական հարկեր և տուրքեր – տեղական կառավարման մարմիններ, ՏԿԶՆ Արտաբյուջետային հաշիվներ – հաշիվ	ԲՆ-ը տիրապետում է վճարումներին՝ ըստ ընկերությունների Տեղական կառավարման մարմինները տիրապետում են ըստ ընկերությունների կատարված վճարումների տվյալներին, ՏԿԶՆ-ը տիրապետում է միայն ընդհանրացված		ԲՆ տրամադրում է Բնապահպանական ֆոնդ կատարված վճարումների մասին տեղեկությունները՝ ըստ պահանջի	Տեղական կառավարման մարմինները իրավունք ունեն հրաժարվել առանձին հանքարդյունաբերական ընկերություններից ստացված եկամուտների մանրամասները տրամադրելուց Արտաբյուջետային հաշիվ ունեցողները կարող են հրաժարվել եկամտի չափի	Օրենսդրություն, որը կսահմանի տեղական կառավարման մարմինների կողմից՝ առանձին հանքարդյունաբերական ընկերություններից ստացած եկամուտների բացահայտում, այդ թվում՝ արտաբյուջետային հաշիվի ստացվածները

մարմինները, պետական ձեռնարկությունները և այլ արտաբյուջետային կառույցները- 5.1(ա)		ունեցողներ (Պետական և տեղական կառավարման մարմիններ)	ցուցանիշների՝ ըստ ՏԻՄ-երի Արտաբյուջետային հաշվի ունեցողները տիրապետում են եկամուտների չափի մասին տեղեկատվության			մասին տեղեկատվություն տրամադրելուց	
ՏԵՂԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ							
<i>Կառավարություն- Կատարված վճարումների բացահայտում</i>							
Տեղական մարմիններին կատարված էական փոխանցումների բացահայտում – 5.2(ա)		ԲՆ (մանրամասն հաշվետվություն ըստ համայնք), Ֆին. նախ., ՏԿԶՆ (ընհանուր գումարների հաշվետվություն)		ԲՆ-ը սույն տեղեկատվությունը չի հրապարակում իր կայքում, բայց տրամադրում է գրավոր դիմելու պարագայում			ԲՆ-ին դիմել Հստակեցնել այն համայնքների ցանկը, որոնք իրավունք ունեն դիմելու սուբսիդավորման՝ Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային

				<p>ւմ</p> <p>www.mtad.am կայքում տրված է միայն ընդհանրական տեղեկատվություն</p>		<p>օգտագործման մասին 2001թ. օրենքի համաձայն: Փոփոխել օրենսդրությունը (ՏԻՄ օրենքը)՝ սահմանելով ԲՆ-ի/ՖինՆախ-ի՝ կատարված վճարումներն ապագրեզացված՝ պաշտոնական կայքում ներկայացնելու պարտականությունը</p>
<i>ՏԻՄ-եր – ստացված վճարումների բացահայտում</i>						
Տեղական մարմիններին կատարված էական փոխանցումների բացահայտում – 5.2(ա)	Կիրառական չէ	ՏԻՄ-եր		Տե՛ս վերը	ՏԻՄ-երը տիրապետում են 2001թ. օրենքի համաձայն պետական բյուջեից՝ բնապահպանական ծրագրերի համար սուբսիդիաների մասին տեղեկատվության, սակայն հստակ չէ՝ արդյոք դա տրամադրվում է ցպահանջ, թե ոչ	Հստակեցնել այն համայնքների ցանկը, որոնք իրավունք ունեն դիմելու սուբսիդավորման՝ Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին 2001թ. օրենքի համաձայն: Փոփոխել օրենսդրությունը (ՏԻՄ օրենքը)՝ սահմանելով համայնքների՝ ստացված վճարումները

							բացահայտելու պարտականությունը:
ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԸ							
Արդյունահանող ոլորտից ստացվող հատուկ ծրագրերի կամ աշխարհագրական շրջանների համար նախատեսված բոլոր եկամուտների նկարագրությունը (խրախուսվում է) – 5.3(ա)	Կիրառական չէ	ԲՆ, Ֆին. Նախ (Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին 2001թ. օրենքի համաձայն, պետական բյուջեից բնապահպանական ծրագրերի համար ստացված սուբսիդիաներ)				Ներկայումս չի բացահայտվում, սակայն ԲՆ-ը մանրամասները տրամադրում է ցպահանջ	ԲՆ-ը կարելի է խնդրել ամփոփ տեղեկատվություն տրամադրել (ծրագրերի թիվը և ընդհանրացված արժեքը, հաշվետվողականության և արդյունավետության գնահատականը)
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ							
<i>Ընկերություններ – կատարված վճարումների բացահայտում</i>							
Օրենսդրությամբ	Այո, իրենց	ԷԵԲՊՆ-ն չի		Որոշ			Փոփոխություններ

կամ պայմանագրով պահանջվող էական սոցիալական ծախսերի բացահայտում - 6.1(ա)	սեփական ծախսերի առնչությամբ	վերահսկում պայմանագրային պարտավորությունները		հաշվետու ընկերություններ իրենց վերկայքերում տրամադրում են տեղեկատվություն, սակայն լիարժեք մանրամասները բացակայում են, ինչպես նաև պարզ չէ՝ արդյոք տվյալ սոցիալական ծախսերը պայմանագրային պարտավորություն են թե կամավոր			Ընդերքի մասին օրենսգրքում, որը կսահմանի ընկերությունների՝ պայմանագրով կամ օրենքով նախատեսված՝ փաստացի կատարված սոցիալական ծախսերը բացահայտելու պարտականությունը
<i>Ստացող մարմիններ – ստացված վճարումների բացահայտում</i>							
Օրենսդրությամբ	Գիրառական չէ	Գիրառական			Հայտնի չէ՝ արդյոք համայնքները ստացված		Փոփոխություններ ՏԻՄ

կամ պայմանագրով պահանջվող էական սոցիալական ծախսերի բացահայտում - 6.1(ա)		չէ			վճարումների/ սուբսիդավորման մասին տվյալներ տրամադրում են ըստ պահանջի, թե՛ ոչ		օրենքում, որը կսահմանի համայնքների՝ ստացված վճարումների/օգուտների մանրամասները բացահայտելու պարտականությունը
ՔՎԱԶԻ-ՖԻՍԿԱԼ ԾԱԽՍԵՐ (ՊԶ-ներ) – 6.2							
Կիրառական չէ							
ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՈԼՈՐՏԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵԶ							
Արդյունահանող ճյուղի չափը՝ բացարձակ մեծություններով և որպես ՀՆԱ-ի տոկոս, ինչպես նաև ոչ ֆորմալ գործունեության գնահատումը – 6.3(ա)	Կիրառական չէ	ԱՎԾ		www.arnstat.am			Չկա. արդյունահանող ոլորտի ներդրումը տնտեսության մեջ կարելի է մեկ էջով ներառել ՀՀ ԱՃԹՆ-ի վերկայքում
Արդյունահանող ճյուղից գոյացած կառավարության ընդհանուր եկամուտները (ներառյալ՝	Կիրառական չէ	ՊԵԿ	Հնարավոր է, որ ՊԵԿ-ը ի վիճակի չլինի մեկուսացնել մետաղական հանքարդյունաբե		Ագրեզացված տեղեկատվություն կարող է տրամադրվել, եթե հարցման շրջանակը հստակ նշված է		

<p>հարկերը, ռոյալթիները, հավելավճարներ, վճարները և այլ վճարումները)՝ բացարձակ մեծություններով և որպես կառավարության ընդհանուր եկամուտների տոկոս - 6.3(բ)</p>			<p>րությունից ստացված եկամուտները այն դեպքերում, երբ հանքարդյունաբերական ընկերությունները ունեն նաև այլ եկամուտներ: ՊԵԿ-ը կարիք կունենա կապվել ԷԵԲՊՆ-ի հետ՝ պարզելու, թե որոնք են մետաղական հանածոների արդյունահանման թույլտվություն ունեցող ընկերությունները</p>				
<p>Արդյունահանող ձյուղերից կատարվող արտահանման ծավալը՝ բացարձակ մեծություններով և որպես արտահանման</p>	<p>Կիրառական չէ</p>	<p>ԱՎԾ</p>	<p>Ազգային վիճակագրության մեջ տրված է օգտակար հանածոների արտահանման ընդհանուր ցուցանիշը՝ որը բացված է ըստ</p>	<p>www.arnstat.am</p>			<p>Չկա. արդյունահանող ոլորտի ներդրումը տնտեսության մեջ կարելի է մեկ էջով ներառել ՀՀ ԱՃԹՆ-ի վերկայքում</p>

<p>ընդհանուր ծավալի տոկոս – 6.3(զ)</p>			<p>տարբեր կատեգորիաների , այդ թվում՝ պղնձի հանքաքար և խտանյութ</p>				
<p>Զբաղվածության մակարդակն արդյունահանող ճյուղերում՝ բացարձակ մեծություններով և որպես ընդհանուր զբաղվածության տոկոս– 6.3(դ)</p>	<p>Կիրառական չէ</p>	<p>ԱՎԾ, ՊԵԿ</p>	<p>Ազգային վիճակագրության մեջ տրված է ընդհանուր զբաղվածության տոկոսը, սակայն դա տրված չէ բացարձակ թվերով: ՊԵԿ-ը 1000 խոշոր հարկատուների ցուցակում տալիս է բացարձակ ցուցանիշները՝ ըստ ընկերությունների, սակայն պարզ չէ, թե ինչ հաճախականությամբ են այդ թվերը թարմացվում</p>	<p>www.arnstat.am</p>			<p>Չկա. արդյունահանող ոլորտի ներդրումը տնտեսության մեջ կարելի է մեկ էջով ներառել ՀՀ ԱՃԹՆ-ի վերկայքում</p>

<p>Այն հիմնական շրջանները (վայրերը), որտեղ կենտրոնացված է արդյունահանումը – 6.3(ե)</p>	<p>Կիրառական չէ</p>	<p>ԱՎԾ</p>		<p>www.arnstat.am</p>			<p>Ծանոթություն. Արդյունահանող ոլորտի հիմնական շրջանների նկարագրությունը մեկ էջով կարելի ընդգրկել ՀՀ ԱՃԹՆ-ի վեբ կայքում:</p>

Հավելված 12. 2016-2017թթ ընթացքում արտաբյուջետային հաշիվ ունեցող համայնքների ցանկը

**2016-2017թթ ընթացքում արտաբյուջետային հաշիվներ
ունեցող համայնքների (բնակավայրերի) ցանկ**

ՀՀ Արագածոտնի մարզ- Աշտարակ, Ապարան

ՀՀ Արարատի մարզ- Արտաշատ, Արարատ, Մասիս,Վեդի, գ.Արարատ, Մխչյան,
Ուրցաձոր:

ՀՀ Գեղարքունիքի մարզ- Գավառ, Սևան

ՀՀ Լոռու մարզ- Ալավերդի, Տաշիր, Ստեփանավան, Սպիտակ, Օձուն

ՀՀ Շիրակի մարզ-Մարալիկ

ՀՀ Սյունիքի մարզ- Կապան, Քաջարան, Գորիս

ՀՀ Վայոց ձորի մարզ- Արենի, Ելփին, Խաչիկ, Չիվա, Ռինդ, Մարտիրոս

ՀՀ Տավուշի մարզ- Իջևան, Նոյեմբերյան, Վազաշեն, Մովսես, Պառավաքար,
Այգեհովիտ, Աչաջուր, Սարիգյուղ, Վազաշեն, Բարեկամավան, Բաղանիս, Դովեղ,
Կոթի, Ոսկեպար, Կողբ, Այգեպար, Մովսես, Չինարի:

Հավելված 13. ՀԱՀ ՊՀԿ-ի կողմից ներկայացված ԱՃԹՆ-ի օրենսդրական փոփոխությունների փաթեթ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԱԳՐԵՈՒՄ»
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին 2011 թվականի նոյեմբերի 28-ի ՀՕ-280-Ն օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 3-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 47-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

Տարբերակ 1

«47) **հրապարակային հաշվետվություն՝** ՀՀ կառավարության կողմից սահմանված չափը գերազանցող ընկերությունների դեպքում աուդիտորական ստուգման ենթարկվելուց հետո՝ աուդիտորական եզրակացության հետ միասին, (իսկ սահմանված չափը չգերազանցելու դեպքում առանց աուդիտորական եզրակացության) սույն Օրենսգրքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված ընդերքօգտագործողների կողմից լիազոր մարմին և ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացվող հաշվետվությունը, որը բաց է հրապարակման համար:»

Տարբերակ 2

«47) **հրապարակային հաշվետվություն՝** աուդիտորական ստուգման ենթարկվելուց հետո՝ աուդիտորական եզրակացության հետ միասին սույն Օրենսգրքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված ընդերքօգտագործողների կողմից լիազոր մարմին և ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացվող հաշվետվությունը, որը բաց է հրապարակման համար: Լիազոր մարմինը իր նորմատիվ իրավական ակտերով կարող է սահմանել ընդերքօգտագործողների գործունեության աուդիտն իրականացնող անձին ներկայացվող այն չափանիշները, որոնց համապատասխանելու դեպքում աուդիտն իրականացնող անձը կարող է աուդիտորական ծառայություն մատուցել ընդերքօգտագործողներին:»

Ծանոթություն. Այստեղ առաջարկվում է երկու տարբերակ: Առաջին տարբերակում կառավարությունը, ելնելով ընդերքօգտագործողների գործունեության ինչ որ չափանիշներից, սահմանում է, որ նրանց հաշվետվությունները պետք է ենթարկվեն աուդիտի: Իսկ երկրորդ տարբերակում բոլոր ընդերքօգտագործողների հաշվետվությունները պետք է ենթարկվեն աուդիտի, սակայն Լիազոր մարմնի կողմից կարող են, ելնելով ընդերքօգտագործողների գործունեության որոշակի ցուցանիշներից,

սահմանվել տվյալ ընդերքօգտագործողի գործունեության աուդիտ իրականացնող ընկերությունների նկատմամբ լրացուցիչ պահանջներ:

Հոդված 2. Օրենսգրքի 9-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 9. Ընդերքօգտագործման հետ կապված գործունեության հրապարակայնությունը

1. Ընդերքօգտագործման հետ կապված գործունեության վերաբերյալ լիազոր մարմինը իր պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակում է օգտակար հանածոյի արդյունահանման և օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության մասով գործունեության վերաբերյալ առնվազն հետևյալ տեղեկատվությունը՝

ա. թույլտվություն ստացած տնտեսվարող սուբյեկտի անվանումը.

բ. թույլտվության ստացման համար ներկայացված դիմումի տարին, ամիսը, ամսաթիվը.

գ. թույլտվության հերթական համարը, տրման տարին, ամիսը, ամսաթիվը և ժամկետը.

դ. թույլտվության երկարաձման դեպքում համապատասխան փաստաթղթի համարը, տրման տարին, ամիսը, ամսաթիվը, թույլտվության երկարաձգման ժամկետը.

ե. ընդերքի տեղամասի ծայրակետերի կոորդինատները և ընդհանուր մակերեսը.

զ. օգտակար հանածոյի անվանումը.

է. ընդերքօգտագործման պայմանագրի համարը, կնքման տարին, ամիսը, ամսաթիվը.

ը. ընդերքօգտագործման պայմանագրում փոփոխություններ կատարելու դեպքում յուրաքանչյուր փոփոխության համար համապատասխան փաստաթղթի համարը, կնքման տարին, ամիսը, ամսաթիվը

թ. օգտակար հանածոյի արդյունահանման մասով գործունեության վերաբերյալ նաև՝

- տրամադրված օգտակար հանածոյի մարվող պաշարների քանակը՝ ըստ հիմնական և ուղեկից բաղադրիչների.

- հանքի տարեկան արտադրողականությունը՝ ըստ լեռնային զանգվածի և հանքաքարի.

ժա. օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության մասով գործունեության վերաբերյալ նաև օգտակար հանածոյի երևակման կամ օբյեկտի անվանումը:

2. Լիազոր մարմինը իր պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակում է նաև մետաղական օգտակար հանածոյի արդյունահանող ընդերքօգտագործողների հետ կնքված ընդերքօգտագործման պայմանագրերը և դրանցում կատարվող փոփոխությունները՝ բացառելով հրապարակման ոչ ենթակա տեղեկատվության (տվյալների) հրապարակումը:

3. Մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ստացած ընդերքօգտագործողը ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կարգով և ժամկետներում պարտավոր է լիազոր մարմին և ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնել հրապարակային հաշվետվություն ընդերքօգտագործման հետ կապված գործունեության վերաբերյալ, որն իր մեջ ներառում է տեղեկատվություն առնվազն՝

1) արդյունահանման տարեկան ծավալների վերաբերյալ.

2) ընդերքօգտագործողի կողմից Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեներ վճարված բոլոր տեսակի պետական և տեղական հարկերի և վճարների /ներառյալ ռոյալթին/ վերաբերյալ՝ առանձին-առանձին.

3) ընդերքօգտագործողի կողմից համայնքային արտաբյուջեներ կատարած վճարների, հողի վարձակալության վճարների, բարեգործական հատկացումների, նվիրատվությունների կամ այլ ձևով համայնքին կատարված անհատույց օտարումների վերաբերյալ.

4) Ընդերքօգտագործման հետ կապված գործունեության շրջանակներում ոչ առևտրային իրավաբանական անձանց տրամադրված նվիրատվությունների, նվիրաբերությունների կամ այլ ձևով կատարված անհատույց օտարումների վերաբերյալ.

5) Ընդերքօգտագործման հետ կապված գործունեության շրջանակներում ֆիզիկական անձանց տրամադրված նվիրատվությունների, նվիրաբերությունների կամ այլ ձևով կատարված անհատույց օտարումների վերաբերյալ՝ նշելով տրամադրված ընդհանուր գումարը և ֆիզիկական անձանց ընդհանուր թիվը.

6) շրջակա միջավայրի պահպանության դրամագլուխ սահմանված չափով կատարված հատկացումների վերաբերյալ.

7) օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման համար մշտադիտարկումների իրականացման վճարների վերաբերյալ.

8) օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ֆինանսական առաջարկները.

9) համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ընդերքօգտագործման իրավունքները հավաստող փաստաթղթերով սահմանված պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը.

10) Ընդերքօգտագործման թափոնների կառավարման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլաններով նախատեսված միջոցառումների և դրանց իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական երաշխիքների վերաբերյալ:

Սույն մասով սահմանված տեղեկատվությունը ընդերքօգտագործողը ներկայացնում է իր կողմից շահագործվող յուրաքանչյուր հանքավայրի մասին առանձին:

Ընդերթօգտագործողը հրապարակային հաշվետվությունը կարող է հրապարակել նաև իր պաշտոնական կայքում /առկայության դեպքում/, ինտերնետով կամ որևէ այլ էլեկտրոնային եղանակով:

4. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված տեղեկատվության հրապարակման և 3-րդ մասով նախատեսված հրապարակային հաշվետվության ներկայացման կարգերը, ժամկետները և ձևերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

5. Սույն հոդվածի իմաստով հրապարակման ոչ ենթակա չի կարող համարվել հետևյալ տեղեկատվությունը՝

1) Ընդերթօգտագործողի կողմից օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ֆինանսական առաջարկները.

2) Պետական տուրքի և ընդերթօգտագործման վճարների վերաբերյալ տեղեկատվությունը.

3) շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի և բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների վճարների վերաբերյալ տեղեկատվությունը.

4) համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում օրենսդրությամբ և ընդերթօգտագործման պայմանագրով սահմանված պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը.

5) Ընդերթօգտագործման թափոնների կառավարման և (կամ) ընդերթօգտագործման թափոնների վերամշակման պլաններով նախատեսված միջոցառումների և դրանց իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական երաշխիքների վերաբերյալ տեղեկատվությունը.

6. Ընդերթօգտագործման հետ կապված գործունեության վերաբերյալ տեղեկատվության տրամադրումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով:

7. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ կարող են սահմանվել սույն հոդվածի կիրառման նպատակով լիազոր մարմին և ՀՀ կառավարության աշխատակազմ տեղեկատվություն ներկայացնող պետական կառավարման այլ մարմիններ:

Հոդված 2. Օրենսգրքի 13-րդ հոդվածի 4-րդ մասը լրացնել նոր 5-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«5) սույն Օրենսգրքի 9-րդ հոդվածով նախատեսված՝ ընդերթօգտագործման հետ կապված գործունեության հրապարակայնության շրջանակներում:»:

Հոդված 3. Օրենսգրքի 69-րդ հոդվածը լրացնել 6-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«6. Լիազոր մարմինը իր պաշտոնական ինտերնետային կայքում յուրաքանչյուր տարի հրապարակում է ընդերթօգտագործողների կողմից շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին վճարված և վերջիններիս վերադարձված գումարների վերաբերյալ տեղեկատվություն:»

Հոդված 4. Անցումային և եզրափակիչ դրույթներ

1. Սույն Օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարկման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Ընդերթօգտագործողները Օրենսգրքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ 2016 և 2017 թվականների հաշվետվությունները պարտավոր են ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կարգով լիազոր մարմին և ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնել մինչև 2018 թվականի մայիսի 1-ը:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված հաշվետվությունների հրապարակումը չի կարող հիմք հանդիսանալ հարկային մարմնի կողմից ընկերություններում ստուգումներ իրականացնելու և լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրելու համար:»:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**ՎԱՐՉԱՎԱՆ ԻՐԱՎԱՆԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացնել 60.2-րդ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 60.2. Ընդերթօգտագործման հետ կապված գործունեության հրապարակայնության կանոնները խախտելը

1. «Ընդերթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենսգրքին համապատասխան ընդերթօգտագործման հետ կապված գործունեության վերաբերյալ լիազոր մարմին և ՀՀ կառավարության աշխատակազմ հրապարակային հաշվետվություն ներկայացնելու պարտավորություն ունեցող անձանց կողմից համապատասխան հաշվետվությունը սահմանված ժամկետում չներկայացնելը՝

առաջացնում են տուգանքի նշանակում կազմակերպության պաշտոնատար անձանց նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի հինգ հարյուրապատիկի չափով:

2. Տուգանքի նշանակման օրվանից հետո՝ յոթ օրվա ընթացքում սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված խախտումը չվերացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում կազմակերպության պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգ հազարապատիկի չափով:

3. Սույն հոդվածով նախատեսված տուգանքի վճարումը պաշտոնատար անձանց չի ազատում թույլ տված խախտումները վերացնելու պարտականությունից:

Հոդված 2. Օրենսգրքի 242.2-րդ հոդվածում «169⁴ -րդ հոդվածներով» բառերից առաջ լրացնել «60.2-րդ» բառերը:

Հոդված 3. Սույն Օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարկման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 308-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում լրացնել նոր «Ե.1.»՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ե.1. ընդերքօգտագործող հանդիսացող հարկ վճարողների ցանկերը.»:

Հոդված 2. Սույն Օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարկման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության 2000 թվականի նոյեմբերի 6-ի ՀՕ-112 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 16-րդ հոդվածը լրացնել նոր 13-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«13. Սույն հոդվածով նախատեսված չբացահայտված տեղեկատվության վերաբերյալ կարգավորումները չեն տարածվում ընդերքօգտագործման հետ կապված գործունեության հրապարակայնության վրա:»:

Հոդված 2. Սույն Օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարկման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 38-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 9-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«9) կառավարության որոշմամբ սահմանված կարգով հրապարակում է ըստ յուրաքանչյուր մետաղական օգտակար հանածոյի ընդերքօգտագործման իրավունք ստացած ընդերքօգտագործողի կողմից՝

ա. համայնքի բյուջե վճարված բոլոր տեղական հարկերի և վճարների վերաբերյալ տեղեկատվությունը՝ յուրաքանչյուր հարկի և վճարի մասով առանձին,

բ. համայնքի արտաբյուջեներ կատարած վճարների, ընդերքօգտագործման իրավունքի պայմանագրով նախատեսված համայնքի զարգացման նպատակով հատկացումների, հողի վարձակալության վճարների, բարեգործական հատկացումների, նվիրատվությունների կամ այլ ձևով համայնքին կատարված անհատույց օտարումների վերաբերյալ տեղեկատվությունը:»:

Հոդված 2. Անցումային դրույթներ

1. Մինչև 2018թ.դեկտեմբերի 31-ը, Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով նախատեսված տեղեկատվության հրապարակման անհնարինության դեպքում, այն տրամադրվում է լիազոր մարմնին:

Յոթրդրոճ 3. Սույն Օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարկման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՊՐՔՈՒՄ»
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍՊՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ», «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ» և «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ**

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

Ա. «Ընդերքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 4-րդ հոդվածով սահմանվում են ընդերքի օգտագործման և պահպանության հետ կապված հարաբերությունների իրավական կարգավորման հիմնադրույթները: Ընդ որում, նույն հոդվածով որպես հիմնադրույթ է հռչակված ընդերքօգտագործման հետ կապված գործունեության հրապարակայնությունը: Օրենսգրքում առկա է հպարարակայնությանը վերաբերող միայն մեկ հոդված՝ 9-րդ հոդվածը, որի համաձայն ընդերքօգտագործման հետ կապված գործունեության վերաբերյալ տեղեկատվության տրամադրումն իրականացվում է Հայաստանի

Հանրապետության օրենքներով սահմանված կարգով: Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության կանոնադրությամբ (15.22.2008թ. թիվ 654-Ն որոշում) որպես նախարարության գործառույթ է նախատեսված քննարկվող ոլորտի հրապարակայնության ապահովումը: Հարկ է նկատի ունենալ սակայն, որ ընդերքօգտագործման ոլորտում հրապարակայնության կարգավորմանն ուղղված որևէ այլ դրույթ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ: Ուստի, պարզ չէ, թե կոնկրետ որ տեղեկատվությունն է ենթակա հրապարակման, ինչ սկզբունքով է իրականացվում նշված հրապարակումը: Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ թեպետև ընդերքօգտագործման թույլտվությունների տրամադրման գործընթացում որոշակի առումով առկա է տվյալների հրապարակայնություն, սակայն դրանց իրավական հիմքերը հասկանալի չեն, ինչպես նաև առկա չէ համապատասխան տեղեկատվության հրապարակման համակարգվածություն կամ սկզբունքայնություն: Բացի այդ, չեն հրապարակվում տրամադրված պաշարների քանակի, արդյունահանման ծավալների վերաբերյալ տեղեկատվությունը: Հաճախ որպես նշված տեղեկատվության չիրապարակման հիմնավորում բերվում է համապատասխան տեղեկատվության՝ առևտրային գաղտնիք հանդիսանալու հանգամանքը: Նշված մոտեցման համար հիմք է հանդիսանում այն, որ ՀՀ օրենսդրությամբ հստակ և սպառիչ ամրագրված չէ առևտրային գաղտնիք համարվող տեղեկատվության շրջանակները:

Ուստումնասիրությունները ցույց են տվել, որ այս կամ այն տեղեկատվությունը առևտրային գաղտնիք համարելու իրավասությունը՝ որպես կանոն վերապահված է տնտեսվարող սուբյեկտին, այսինքն տեղեկատվությանը տիրապետողն ինքն է որոշում ինչպիսի տեղեկատվությունը համարել առևտրային գաղտնիք և ինքն էլ սահմանում է դրա պահպանության կանոնները: Սակայն, քննարկվող իրավազորությունը անսահմանափակ չէ: Ցանկացած պետություն իրավունք ունի պետական և հանրային շահերի պաշտպանության նպատակով պետական և

նազմական անվտանգության ապահովման համար, ինչպես նաև անբարեխիղճ մրցակցությունը կանխելու և սպառողների շահերի պաշտպանությունն ապահովելու նպատակով սահմանել տեղեկատվության այն տեսակները, որոնք, առևտրային կամ այլ գաղտնիք համարվել չեն կարող: Սակայն, քանի որ ՀՀ օրենսդրությամբ ընդերքօգտագրման ոլորտում հրապարակայնության շրջանակներ նախատեսված չեն, ուստի անհրաժեշտություն է առաջացել վերոնշյալ փաթեթով կարգավորել նաև այն տեղեկատվության հետ կապված հարցերը, որոնք փաթեթի իմաստով չբացահայտվող տեղեկատվություն կամ առևտրային գաղտնիք հանդիսանալ չեն կարող:

Այս առումով, նախագծի մշակման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (այսուհետ նաև՝ ԱՃԹՆ) ստանդարտերով հստակ սահմանված են ընդերքօգտագործման ոլորտում հրապարակման ենթակա տեղեկատվությանն շրջանակին առնչվող մի շարք հարցեր: Հայաստանի Հանրապետությունը նախաձեռնել է ԱՃԹՆ-ին անդամակցության գործընթաց և 2016 թվականի դեկտեմբերի 28-ի գրությամբ՝ ՀՀ կառավարությունը պաշտոնապես ներկայացրել է թեկնածուության հայտը:

Հաշվի առնելով վերոնշյալը անհրաժեշտություն է առաջացել ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսված մի շարք դրույթներ համապատասխանեցնել ԱՃԹՆ-ի ստանդարտներին:

Վերոնշյալ օրենսդրական նախաձեռնությունների փաթեթի մշակումը պայմանավորված է հենց այդ հանգամանքով:

ԱՃԹՆ-ի ստանդարտներից է հանդիսանում նաև հարկային մարմնի կողմից ընդերքօգտագործողների կողմից հարկերի վճարման վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը (ընդ որում՝ տեղեկատվությունը պետք է հրապարակվի ապագաբեզացված, այսինքն՝ յուրաքանչյուր հարկատեսակի մասով

առանձին): Հաշվի առնելով, նվաճը փաթեթում ներառվել է նաև Հարկային օրենսգրքում փոփոխություն կատարելու վերաբերյալ նախագիծը:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը.

Օրենսդրական նախաձեռնության փաթեթով առաջարկվում է՝

Ա. Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքում առաջարկվող փոփոխություններ.

- 1) Փոփոխություններ կատարել Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքում՝ սահմանելով ընդերքօգտագործման ոլորտում լիազոր մարմնի կողմից հրապարակման ենթակա տեղեկատվության շրջանակները.
- 2) Օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ստացած ընդերքօգտագործողների համար պարտավորություն սահմանել իրենց պաշտոնական կայքում, մամուլում, ինտերնետով կամ էլեկտրոնային այլ եղանակով հրապարակել արդյունահանման տարեկան ծավալների վերաբերյալ տեղեկատվություն:
- 3) Նախորդ տարվա ֆինանսական հաշվետվությունների հրապարակման արդյունքում ընկերությունների համար հնարավոր բացասական հետևանքներից խուսափելու համար նույն օրենքի նախագծով նախատեսվում է սահմանել, որ նախորդ տարվա հաշվետվությունների հրապարակումը չի կարող հիմք հանդիսանալ հարկային մարմնի կողմից ընկերություններում ստուգումներ իրականացնելու և լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրելու համար:»:

Բ. Հարկային Օրենսգրքում առաջարկվող փոփոխություններ.

Հարկային օրենսգրքով հարկային մարմնի կողմից հարկ վճարողների վերաբերյալ տեղեկությունների հրապարակման պարտականությունը և տեսակները նախատեսված է Օրենսգրքի 308-րդ հոդվածով:

Այս հոդվածի համաձայն հարկային մարմինը իր պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակում է՝

- 1) մինչև հարկային տարվան հաջորդող հարկային տարվա հուլիսի 1-ը ներառյալ՝

ա. հարկային տարվա արդյունքներով հարկային վնասներ հայտարարագրած և ապառքներ կուտակած հարկ վճարողների ցանկերը,

բ. աշխատողի աշխատանքի ընդունումն օրենսդրությամբ սահմանված կարգով չգրանցած հարկ վճարողների ցանկերը,

գ. հարկային տարվա արդյունքներով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 50 միլիոն դրամ և ավելի շահութահարկ վճարած հարկ վճարողների ցանկերը,

դ. հարկային տարվա արդյունքներով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 10 միլիոն դրամ և ավելի եկամտային հարկ վճարած հարկային գործակալների ցանկերը,

ե. Օրենսգրքի 384-րդ հոդվածի համաձայն՝ գործունեությունը կասեցված կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ցանկը,

զ. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ տեղեկություններ.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը ներառյալ՝ առաջին 1000 խոշոր հարկ վճարողների ցանկերը և հարկային տարվա սկզբից նրանց վճարած հարկերի մեծությունները՝ հաշվարկված աճողական կարգով:

Այսինքն, եթե ընդերքօգտագործող հանդիսացող ընկերությունը չի բավարարում վերոնշյալ ցանկերում ընդգրկվելու որևէ պայմանի, ապա հարկային մարմինը վերջինիս մասով տեղեկատվություն հրապարկվելու որևէ պարտավորություն չունի:

Մինչդեռ ԱՃԹՆ-ի ստանդարտերով ինչպես արդեն նշվեց պահանջվում է ընդերքօգտագործողների վերաբերյալ հարկերի մասով տեղեկատվության հրապարակման պարտադիր պահանջ: Ուստի, նախագծով առաջարկվում է հարկային մարմնի կողմից հրապարակման ենթակա վերոնշյալ ցանկում լրացնել նաև ընդերքօգտագործող հանդիսացող հարկ վճարողների ցանկերի հրապարակման պարտադիր պահանջ: Ընդ որում, հրապարակումը կիրականացվի

Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ձևով և կարգով, ինչը ամրագրված է նաև Հարկային օրենսգրքով:

Գ. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում առաջարկվող լրացում.

ԱՃԹՆ-ի ստանդարտերի համաձայն պարտադիր հրապարակման է ենթակա նաև ընդերքօգտագործողների կողմից այս կամ այն համայնքի արտաբյուջե կատարված վճարումների վերաբերյալ տեղեկատվությունը: Համայնքների արտաբյուջեների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Բյուջետային համակարգի մասին» և «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքներով: «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի համաձայն համայնքի ավագանու որոշմամբ արտաբյուջետային միջոցները ենթակա են ներառման համապատասխանաբար պետական կամ համայնքի բյուջե, իսկ այդ միջոցների շրջանառությունը և բյուջեների կատարման հաշվետվություններում արտացոլումն իրականացվում է «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքով: Նույն Օրենքի համաձայն համայնքային հիմնարկների անվամբ բացված արտաբյուջետային հաշիվները տնօրինում են տեղական ինքնակառավարման մարմինները: Հայաստանի Հանրապետության և համայնքների ակտիվների ու պասսիվների հաշվառման նպատակով գանձապետարանն ապահովում է Հայաստանի Հանրապետության բյուջետային հատվածի վերաբերյալ պետական մարմիններից պետական հիմնարկների հաշվեկշիռների (ակտիվների ու պասսիվների), ֆինանսական հոսքերի (ներառյալ՝ արտաբյուջետային միջոցների գոյացման ու տնօրինման) մասին հաշվետվությունների ստացումը, ամփոփումը, վերլուծությունը: Չնայած, ՀՀ օրենսդրության վերոնշյալ կարգավորումներին՝ ՀՀ օրենսդրությամբ համայնքների արտաբյուջեների թափանցիկության վերաբերյալ որևէ դրույթ առկա չէ: Մասնավորապես, եթե օրինակ պետական մարմինների անվամբ բացված արտաբյուջեների և դրանց նախահաշիվների հաստատման վերաբերյալ ՀՀ կառավարության որոշումները ընդունվում են նորմատիվ

հրավական ակտի տեսքով և պարտադիր ենթակա են հրապարակման, ապա պարզ չէ համայնքի արտաբյուջեների դեպքում համայնքի ավագանու որոշումների բնույթը և հրապարակման աստիճանը:

Հարկ է նկատի ունենալ, որ «հրավական ակտերի մասին» ՀՀ գործող օրենքը նախատեսում է համայնքի ավագանու որոշումների պարտադիր հրապարակման պահանջ, սակայն այս պահանջը վերաբերում է միայն ավագանու նորմատիվ որոշումներին: Հաշվի առնելով, այն, որ համայնքի արտաբյուջեների՝ որպես նորմատիվ ակտ հրապարակման պահանջ ամրագրված չէ, նախագծով առաջարկվում է քննարկվող օրենքում փոփոխություններ կատարելու միջոցով նախատեսել համայնքի ավագանու արտաբյուջեների վերաբերյալ որոշումները համապատասխան բնագավառի լիազոր մարմնի կայքում հրապարակելու պարտադիր պայման: Պարզ է, որ լիազոր մարմնի կայքում հրապարակումը չի հանդիսանա ակտի պաշտոնական հրապարակում, սակայն ֆորմալ առումով կապահովի ԱՃԹՆ-ի ստանդարտներին համապատասխանեցում:

Դ. «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում.

Այս օրենքում լրացում կատարելու անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածը սահմանում է չբացահայտված տեղեկատվության վերաբերյալ որոշակի կարգավորումներ, որոնք լայն և տարակարծիք մեկնաբանելու արդյունքում կարող են առնչվել ընդերքօգտագործողների կողմից հրապարակվող տեղեկատվությանը և «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի իմաստով համարվել չբացահայտվող տեղեկատվություն: ՀՀ տարբեր օրենքների միջև հակասություններից և տարակարծիք մեկնաբանություններից խուսափելու նպատակով, առաջարկվող է սույն փաթեթում ներառված նախագծով սահմանել, որ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի դրույթները չեն տարածվում

ընդերքօգտագործման ոլորտի հրապարակայնությանն հետ կապված հարաբերությունների վրա:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները.

Նախագիծը մշակվել է Հայաստանի Ամերիկյան Համալսարանի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնի կողմից:

4. Ակնկալվող արդյունքը.

Նախագծերի ընդունման արդյունքում նախատեսվում է ապահովել ՀՀ օրենսդրության համապատասխան ԱՃԹՆ-ի ստանդարտներին և Հայաստանի Հանրապետության՝ ԱՃԹՆ-ի գործընթացներին ինտեգրման սահուն իրականացում:

Տեղեկանք

**«ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՍՏԱՍԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ»
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ», «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ» և «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ը ն դ ու ն մ ան
ԱՆՀ Բ Ա Ժ Ե Շ Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Բ Ա Ց Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ա Ն Մ Ա Ս Ի Ն**

Օրենքների նախագծերի ընդունման կապակցությամբ այլ օրենքների ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:

ԵՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**««ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՍՏԱՍԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ» ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»,
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» և «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ՆՎԱՋԵՑՄԱՆ ԿԱՄ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ
ՄԱՍԻՆ**

Օրենքների նախագծերի ընդունման դեպքում պետական բյուջեում եկամուտների էական նվազեցում կամ ծախսերի ավելացում չի նախատեսվում: